

Մ Ե Ա Ն

6480

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՐՔ Ա.

Բ. ԳԻՐՔ

ՄԻԶԻՆ ԵՒ ՆՈՐ ԴԱՐԵՐ



9(Կ7.925)

Ա-50

Գ. Ա. Հ Բ Բ է

ՏԱԿԱՐ. ՏԱԿՈՐ ՓԱՓԱՋԵԱՆ

1937

24 JAN 2005

Հ. ԱՃԵՄԵԱՆ

9(47.925)

Q-50

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՐՔ Ա.

Բ. ԳԻՐՔ

ՄԻԶԻՆ ԵՒ ՆՈՐ ԴԱՐԵՐ



6480

Գ. Ս. Հ Բ Բ Կ
ՏՊԱԳՐ, ՏԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆ

1937

- 6 FEB 2013

3401

— ՏՊԱՐԱՆ —
ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ
ԻՊՐԱՀԻՄ ՓԱՇԱ —
ՀԱՐԵԹ ՖԱԿԻ ԹԻՒ 6
1937 — ԳԱԶԻՐԵ



10762-2

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս դասագիրքը շարունակութիւնն է Ա. Գիրքին,
այսինքն Հին Դարերուն: Հետեւաբար ներկայս կը բո-
վանդակէ Միջին եւ Նոր Դարերը եւ կը հասնի մին-
չեւ մեր օրերը, Ա. Գիրքին համառօսութեամբ եւ անոր
դրութեամբ:

Մեր նախակրթաբներէն շատերուն մէջ Հայոց
Պատմութեան դասը կ'աւանդուի երկու սիլիի դրու-
թեամբ, նախ՝ համառօս, սկզբէն մինչեւ վերջ, ապա՝
մ'աւելի բնդարձակ: Ուրեմն, մեր Ա. եւ ներկայ
Բ. Գիրքերը կը կազմեն առաջին սիլիը եւ նախակրթ-
աբնի մը միջին բաժանմունքնեն մեկնող աշակերտ մը
ամբողջութեամբ տեսած կ'ըլլայ իր ազգին պատմու-
թիւնը իր լրութեանը մէջ:

Նախորդին պիս, նոս եւս աշխատած ենք մնալ
բնդիանութեան մէջ, մեր նիւթերը առնելով շշան առ
շշան եւ ծանրանալով միայն երեւոյթներու վրայ: Լե-
զուն եւս ջանացած ենք բնծայել պարզ ու դիւրահաս-
կրնալի, ինչպէս նախորդին մէջ :

Երկրորդ սիժի Բ. մասը արդեն լոյս ընծայած ենք
երկու գիրքով՝ Միջին Դարեր եւ Նոր Դարեր ու Ժա-
մանակակից Շրջան բաժանումով։ Պատրաստուելու վրայ
է առաջին մասը զար լոյս պիտի ընծայենք մօս ժամա-
նակին։

Այս լրացումներով մենք գոհացում տուած կ'ըլ-
լանք յարգելի պաշտօնակիցներու եւ Ազգ. Վարժարա-
նաց տեօրիններու խնդրանեներուն որոնց դրական բա-
զալերանքը զօրավիք մ'եղաւ մեզի սկսուած գործը
լրման հասցնելու համար։

1937 Հոկտ. 20

Հեղիոպոլիս

Լ. ԱձեՄԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.

ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐ

1. ՄԱՐԶՊԱՆԱՅ ՇՐՋԱՆ (428-640)

ԴԱՍ Ա.

ՎԱՐԴԱԿԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԻՒՆ. — Սասանեան թագաւոր-
ները 428 թուականին վերջացնելէ յետոյ Ար-
շակունեաց թագաւորութիւնը, մեր երկիրը կա-
ռավարեցին Մարզպաններով։

Այս շրջանը տեւեց 428-640 թուականը
երբ Արաքները տիրեցին մեր երկիրին։

Բայց մարզպանները միշտ Պարսիկ չեղան-
անոնցմէ ոմանք հայ էին։

Այս շրջանին, Պարսիկները, երեք անգամ
հալածանք հանեցին Հայոց դէմ և երեք անգա-
մուն ալ Հայերը դէնքի դիմեցին՝ ինքզինքնին
պաշտպանելու համար։

Այս երեք անգամուն ալ Մամիկոնեանները

եղան Հայոց առաջնորդը — Քաջն Վարդան Մամիկոնեան, Վահան Մամիկոնեան և Վարդան Գ. Մամիկոնեան:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒՆ ՊԱՏՇԱՌՈՆԵՐԸ. — Պարսից այս հալածանքներուն պատճառները երկուք էին — քաղաքական և կրօնական: Քաղաքական՝ որովհետեւ Պարսիկները կ'ուզէին Հայաստանի տիրանալ, և կրօնական՝ որովհետեւ Հայաստանի տիրանալու համար. Պարսիկները կ'ուզէին Հայերը կրօնափոխ ընել, կրակապաշտ դարձնել:

Այդ ժամանակներ հայ նախարարները բաժնուած էին երկու կուսակցութեան: Ոմանք կ'ուզէին Յոյներու օգնութեամբ վերականգնել Հայոց թագաւորութիւնը, իսկ ուրիշներ կը մտածէին Պարսիկներու հետ ըլլալ և պատիւներու հասնիլ: Առաջիններու պետն էր Վարդան, իսկ երկրորդներուն՝ Վասակ Սիւնեաց իշխանը:

ՅԱԶԿԵՐԸԻ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԸ. — Այս ժամանակներ Պարսից թագաւորն էր Յազկերտ Բ. որ փառասէր և հպարտ մէկն էր: Ան կը մտածէր որ եթէ Հայերը կրակապաշտ դարձնելու ձեռնարկէ, Յոյները պիտի պաշտպանեն զանոնք: Ուստի, ան նախ ուզեց յաղթել Յունաց: Պատերազմ բացաւ անոնց դէմ, յաղթեց և խոստում

առաւ յունաց կայսրէն որ պիտի չօգնէ Հայերուն:

Բայց կային տակաւին Հոները, որոնք Հայաստանի և Վրաստանի հյուսիսային կողմերը կ'ապրէին և Հայոց դաշնակիցներն էին: Յազկերտ անոնց եւս յաղթեց և կովկաս լեռներէն անդին քշեց:

Այս բոլորէն յետոյ Յազկերտ Հայաստան դրկեց Դեն-Շապուհ անունով պարսիկ մը Հայաստանը աշխարհագիր ընելու և տուրքերով Հայերը աղքատացնելու, որպէսզի անոնք նեղուին և հնազանդին իր չար կամքին:

ՄԻՀՐ-ՆԵՐՄԵՀԻ ՆԱՄԱԿԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԽԱՆԸ. — Յազկերտ Բ. ունէր իրեն խորհրդական մը Միհր-Ներսէն անունով, որ ծեր, փորձառու և խորամանկ մարդ մըն էր: Ան նամակ մը գրելով Հայերուն կը ծաղրէր քրիստոնէութիւնը և կը հրաւիրէր զանոնք որ կրակապաշտ դառնան:

Այս նամակը առնելով, հայ մեծ եկեղեցականներն ու իշխանները, Արտաշատ քաղաքին մէջ ժողով մը գումարեցին ու խիստ պատասխան մը գրեցին: Նամակը վերջացուցին այսպէս. «Այս հաւատքեն մեզի ոչ ոք կրնայ խախտել, ոչ հրետակները, ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր: Մեր հարբա-

տուքիւնը քու ձեռքդ է, մեր մարմինը քու առջեւդ, քրկ' ինչ որ կ'ուզես, ենզմէ տաճշանք մեզմէ համբերութիւն, քու սուր եւ մեր պարանոցներ»:

ՆԱԽԾՐԱՐՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՌՈՑՈՆ Կ'ԵՐԹԱՆ ԵՒ ԱՌԵՐԵՍՍ Կ'ՈՒՐԱՆԱՆ ԻՐԵՆՅ ԿՐՈՆՔԸ.— Յաղ-կերտ թագաւորը այս նամակը առնելով շատ զայրացաւ և հրամայեց որ զայն ստորագրողները իրեն ներկայանան: Իշխանները Պարսկաստան գացին, բայց թագաւորը զանոնք շատ դէշ ընդունեց, հրամայեց բանտ նետել և սպառնաց որ եթէ իր կամքը չկատարեն՝ պիտի սպաննուին և իրենց երկիրն ալ քար ու քանդ պիտի ըլլայ:

Նախարարները, նեղը մնացած, առերեսու ուրացան իրենց կրօնքը: Թագաւորը շատ ուրախացաւ, միւս օրը մեծ հանդէսով արեւին երկրպագութիւն ըրաւ անոնց հետ, և նուէրներ տալով, զօրքով ու մոգերով զանոնք չայաստան շրկեց որ չայերը կրօնափոխ ընեն:

ԱՆԳՂ ԳԻՒՂԻ ԴԵՊԲԸ.— Նախարարներն ու մոգերը երբ Անդղ գիւղը հասան, մոգերուն պետը ուզեց գիւղին եկեղեցին կը ակատունի փոխել: Բայց Ղեւոնդ երեց անուն քարոզիչը ժողովութիւն դրուխուր անցաւ և ջարդ ու փշուր ըրաւ մոգերը: Մոգպետը յուսահատեցաւ և ուզեց դրել թագաւորին որ ետ կենայ իր միտքէն, բայց Վասակ արդելք եղաւ:

ԴԱՍ Բ.

ԱԻԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԸ.— Հայ մեծամեծները հաւաքուեցան Շահապիվան քաղաքին մէջ ու որոշեցին հաւատարիմ մնալ իրենց հայրենի հաւատքին վրայ: Ապա, Վարդանի առաջնորդութեամբ, յարձակեցան մոգերու վրայ և շատերը ջարդեցին:

ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՎԱՍԱԿԻ ԴԱՒԱԾԱՆՈՒԹԻՒՆԸ.— Այս ատեններ դաշնակից Աղուանները չայերէն օդնութիւն խնդրեցին Պարսիկներու դէմ, որոնք իրենց երկիրը մտած՝ կը ստիպէին որ կրօնափոխ ըլլան: Վարդան գնաց անոնց օդնութեան, յաղթեց Պարսից և առաջացաւ մինչև Հոնաց սահմանները ու անոնց հետ դաշինք գրաւ իրարու օդնելու համար:

Վարդանի բացակայութենէն օդտուելով, Վասակ սկսաւ հալածել հայ եկեղեցականները, եկեղեցիները կը ակատունի վերածել և հայոց միաբանութիւնը քակտել:

Այս լուրերը առնելով Վարդան աճապարանքով ետ դարձաւ, սակայն Վասակ փախաւ իր երկիրը՝ Սիւնիք:

Եղանակը ձմեռ ըլլալով՝ Վարդան արձակեց իր զինուորները, պատուիրելով՝ որ պատրաստուին գարնան համար:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. — 451 ի գարնան պարսիկ մեծ բանակ մը կը մօտենար Հայաստանի սահմաններուն: Վարդան հրաման դրկեց բոլոր նախարարներուն որ հաւաքուին և միասին թշնամիին գէմ երթան: Հաւաքուեցաւ 66,000 հոդի, Պարսից թիւը 300,000 հոդի էր:

Հայ և պարսիկ բանակները դէմ առ դէմ եկան Շաւարչան դաշտին մէջ, ծըլմուտ գետին եղերքը: Տեղի ունեցաւ կատաղի ճակատամարտ մը, ուր ինկաւ Վարդան 1036 կը րիմնելով: Հայ բանակը անդլուխ մնալով բաշու-



ՊԱՐՍԻԿ ԶՈՐՔԵՐ
«Անմաներու գունդ» էն

յաւ լեռները և սկսաւ խմբական կռիւներ մղել: Սակայն, ինչքան որ Հայերը յաղթուեցան, բայց Պարսիկներն ալ իրենց նպատակին չհասան, քանի որ Հայերը իրենց հաւատքին վրայ հաստատ մնացին:

ՎԱՅՈՒԴԻ ԴԱՅՈՍՍՑԱՆԸ. — Հայոց դաշնակից Հոները այս բաները լսելով արշաւեցին Պարսկաստան ու մեծ վնասներ հասցուցին: Յազկերտ յուղուած այս բուլոր ձախորդութիւններէն, ուզեց դտնալ յանցաւորները: Հայ մեծամեծները, եկեղեցականներն ու պարսիկ երեւելիները իր քով կանչեց ու դատաստան ըրաւ: Ամէնքը յանցանքը Վասակի վրայ նետեցին: Ան խարած էր թէ՛ Հայերը թէ Յազկերտը: Թագաւորը զայն պատժեց՝ ցմահ բանտարկելով: Բանտարկեց նաև հայ իշխանները, իսկ հոգեւորականները նահատակուեցան:

Հայ ազգը ամէն տարի կը յիշէ այս դէպքերը, տօնելով Վարդանանց և Ղեւոնդեանց յիշատակը:



Յազկերտ Բ.

ԴԱՍ Գ.

**ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ
ԿՈՒԻՆԵՐԸ**

ՀԱՅՈՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ. — Յաղկերտ տեսնեւով որ իր նպատակներուն մէջ չյաջողեցաւ և ուղելով չայոց սիրտը շահիլ, կրօնքի աղատութիւն տուաւ և տուրքերը թեթեւցուց:

Բայց իր որդին Պերող նորէն փորձեց չայերը կրակապաշտ դարձնել: Այս անդամ անխորամանկութեան դիմեց:

Ով որ կրակապաշտ կը դառնար մեծ պատիւներու կ'արժանանար: Այնպէս որ քիչ տաենէն չայաստան դէշ մարդերով լեցուեցաւ:

Մէկը պէտք էր որ այս վիճակին առաջըը առնէր:

Այդ մէկը եղաւ վահան Մամիկոնեանը, որ վարդանի եղբօր տղան էր:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — Վահան պարսից թագաւորին պալատին մէջ ապրած էր և շատ սիրուելով թագաւորէն՝ կարեւոր պաշտօն մը առած էր: Նախանձոտ հայ նախարարները իր մասին զրպարտութիւններ ըրած ըլլալով՝ վա-

հան ստիպուեցաւ իր կրօնքը ուրանալ: Գիշեր մը, հայրենասէր նախարարները եկան իրմէ խնդրեցին որ իրենց միանայ և Պարսիկները չայաստանէն վոնտեն: Վահան նախ մերժեց: Բայց երբ տեսաւ որ անոնք խարերայ մարդիկ չեն, միացաւ անոնց և

այդ գիշերն իսկ յարձակեցաւ. Պարսից վրայ և վախցուց անոնց մարզպանը:

Սկսան նոր կուիւներ:

Սակայն վահան կուռելու նոր ձև մը ընտրեց: Ան մեծ բանակով չէր պատերազմեր:

Փոքր խումբերու գլուխ անցած կը պահուըտէր և պարսիկ զօրքը անցած ատենը յանկարծ վրան կը յարձակէր ու կը կոտորէր: Այս կերպով, անբազմաթիւ անդամներ յաղթանակ տարաւ, այնպէս որ Պարսիկները ա՛լ չէին ուղեր իրեն դէմ կոխի դալ:



Վահան Մամիկոնեան

ՆՈՒԾԲՐՈՒԿԻ ԴԱՅԻՆՔ. — Երբ Պերողին յաջորդեց Վաղարշ խելացի թագաւորը, սա ուղեց վահանի հետ հաշտուիլ: Նիխոր անունով իշխան մը զրկեց որ հասկնայ թէ Վահանը ի՞նչ կ'ուզէ: Վահան երեք պայման առաջարկեց.

Ա. Կրօնիք ազատ պէսէ է ըլլայ:

Բ. Թագաւորը անպիտան եւ ռողոքորք մարդոց պատիւ եւ պատօն պէսէ չէ տայ:

Գ. Թագաւորը ամեն ամբաստանուրեան պէսէ չէ հաւատայ:

Թագաւորը տեսնելով որ Վահանի պահանջները արդար են, հրամայեց նիխորին հաշտութիւն կնքել անոր հետո:

Այդ դաշինքը կնքուեցաւ նուարսակ դիւղին մէջ, 484 թուին:

Վահան, անկէ յետոյ, պարսից թագաւորին քով դնաց և Հայաստանի մարզպան կարգուեցաւ ու խելացութեամբ կառավարեց իր երկիրը:



Հայ զինուոր մը եւ զինուորական մը

ԴԱՍ Դ.

ՎԱՐԴԱՆ Գ.Ի ԵՒ ԳԱՅԼ ՎԱՀԱՆԻ ԿՈՒԻՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ Գ.Ի ԿՈՒԻՆԵՐԸ.— Վահանէն յետոյ Հայաստան բաւական ժամանակ խաղաղ ապրեցաւ: Սակայն երբ Սուրէն անունով պարսիկը մարդպան եկաւ Հայաստան և փորձեց նորէն մեր աղջը կրօնափոխ ընել, Հայերը նորէն պատերազմի ելան՝ յունաց կայսեր օդնութեամբ: Մեծ պատերազմ մը եղաւ Կաղամախի դաշտին մէջ և պարսիկները ջարդուեցան ու փախան:

Ասկէ յետոյ, տակաւին ուրիշ պատերազմներ եւս եղան, սակայն հայ զօրավարներ, հայ և յոյն բանակներով, միշտ յաղթանակ տարին և Հայաստանը դրին յունաց իշխանութեան տակ:

ԴԱՅԼ ՎԱՀԱՆԻ ԿՈՒԻՆԵՐԸ.— Երբ յունաց իշխանութեան տակ, Վերի Հայաստանը խաղաղ կ'ապրէր, Տարօն գտւառը պատերազմներու մէջ էր Պարսից դէմ:

Այս երկրի իշխանն էր Մուշեղ Մամիկոննեանը: Պարսից թագաւորը, Յունաց դէմ պատերազմի մը ժամանակ, ուզած էր որ Մուշեղը իրեն միանայ: Իսկ Մուշեղը չէր ուզած: Ասոր վրայ, թագաւորը, Միհրան զօրապետին առաջ-

նորդութեամբ բանակ մը զրկեց Մուշեղի վրայ, զայն պատժելու համար:

Սակայն Մուշեղ ազգական մը ունէր Վահան անունով, որ Գայլ ալ կը կոչուէր և որ շատ խորամանկ և քաջ մէկն էր: Մուշեղ անոր յանձնեց իր զօրքերը Տարօնը պաշտպանելու համար:

Գայլ Վահան հայ զօրքերը հոս հոն պահելէ յետոյ, Միհրանի քով գնաց և ինքինքը Մուշեղի թշնամի ցուցնելով, անոր զօրքերը մաս մաս իր երկիրը բերելով շարդել տուաւ: Ամենէն վերջը, 100 ի չափ կտրիճներով, ան նորէն Միհրանի քով գնաց և ըսաւ թէ Մուշեղը բոլորովին յաղթուեցաւ: Այս լուրին վրայ Միհրան ուրախութիւն մը սարքեց: Երբ Պարսիկները գինովցած ինկած էին, Գայլ Վահան հրամայեց իր կտրիճներուն որ գործի սկսին: Անոնք պարսիկներու վրայ իյնալով բոլորն ալ սպաննեցին:

Միհրանէն յետոյ քանի մը զօրապետներ եւս եկան Տարօնի վրայ, բայց բոլորն ալ յաղթուեցան Գայլ Վահանէն:

Այս բոլոր պատերազմներու ժամանակ Հայաստան շատ անգամ աւելումներու ենթարկուեցաւ, բայց Հայ ժողովուրդը աւելի սիրեց իր հայրենիքն ու կրօնքը: Իսկ Յոյներն ու Պարսիկները, այդ կունեներուն պատճառաւ, տկարացան և չկրցան գիմաղբել Արաբներուն որոնք նոր մէջտեղ կ'ելլէին:

2. ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ

ԴԱՍ Ե.

Ա. ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ՃՐՁԱՆ

(640-885)

ԱՐԱԲՆԵՐ.— Արաբ ժողովուրդը կը բնակի Արաբիոյ մէջ՝ Անոնք առաջ կուապաշտ էին և շարունակ իրարու գէմ կը պատերազմէին: Սակայն Քրիստոսէ 622 տարի յետոյ անոնք Մուհամմէտի հիմնած նոր կրօնքը ընդունեցին, աստուածապաշտ դարձան և մահմէտական եղան: Մուհամմէտ անոնց արգիլեց իրարու հետ կոռուիլ Մուհամմէտի մահէն յետոյ, Արաբները սկսան ուրիշ երկիրներու վրայ արշաւել և այս կերպով շատ ընդարձակ կայսրութիւն մը կազմեցին:

ԱՐԱԲՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱՐՃԱԽԵՆ.— Կործաննելէ յետոյ պարսից թագաւորութիւնը, 640 թուականին Արաբները Հայաստան մտան: Գայլ Վահանի թոռնորդին՝ Տիրան Մամիկոնեան, լուր զրկեց բոլոր հայ նախարարներուն որ գան միասին գէմ գնեն այս թշնամիին: Սակայն նա-



Արաբական կայսրութիւնը

իսարարները իրաղու հետ գժտուած ըլլալով
չպատասխանեցին Տիրան Մամիկոնեանին, որ իր
զօրքերով Արաբներու դէմ ելաւ, յաղթուեցաւ
և սպաննուեցաւ։ Արաբները մտան Հայաստան,
շատ մարդ կոտորեցին և շատ գերի տարին։

Անկէ յետոյ, Արաբները 53 տարի Յունաց
դէմ պատերազմեցան Հայաստանի տիրապե-
տութեան համար և վերջապէս յաջող եցան (693):

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ. — Տիրիլէ յետոյ մեր երկրին,
Արաբները Հայաստանը կառավարեցին Ոստի-
կաններով։ Ոստիկանին պարտականութիւնն էր
հսկել որ Հայերը չապսամբին եւ Տուրքերը ժողվելով
ամրապետին դրկել։

Այս ոստիկաններէն քիչերը լաւ մարդիկ եղան, միւսները շատ անգթութիւններ դորձեցին և Հայերը ստիպուեցան քանի մը անգամ ապօստամբիլ: Ոստիկանները մանաւանդ հակառակ էին էին հայ նախարարներուն, որոնք աղջին մեծերն էին, և անոնցմէ շատերը կոտորեցին:

Բայց Արաբները երբեք չփորձեցին Հայերը կրօնա-
փոխ լնել, ինչպէս կ'ընեին Պարսիկները նաև Յոյները:

ԱՐԱԲԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԼԱՅՈՒՄԸ.—
Սակայն արաբական կայսրութիւնն ալ քիչ քիչ
տկարացաւ։ Որովհետեւ անոնք շատ կը նե-
ղէին հպատակ ազգերը՝ անոնցմէ շատ տուրք
պահանջելով, այդ ազգերը միշտ կ'ապստամ-
բէին։ Հայերն ալ քանի մը անդամ ապստամ-
բած էին արդէն։

Այս ատեններ հայ նախարարներու մէջ շատ զօրացած էին Բագրատունիները, որոնք Արաբներու կողմէ ալ սիրուած էին:

Ասոնցմէ մէկը, Աշոտ թագրատունին՝ յաջո-
ղեցաւ Հայաստանի թագաւոր ըլլալ:

Արաբներու տիրապետութիւնը Հայաստանի
վրայ տեւեց 640 – 885 երբ հաստատուեցաւ
Բագրատունեաց թաղաւորութիւնը:



ԴԱՍ Զ.

Բ. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՇՐՋԱՆ
(885 - 1045)

ԱՌՈՑ Ա.

ԱՇՈՑ Ա. — Արաբներու վերջին ռատիկանը շատ անգութ մարդ էր։ Ան բազմաթիւ հայ նախարարներ գերի տարաւ արաբներու մայրաքաղաքը։ Այս գերիներու մէջ էր նաև Սմբատ Բագրատունի մեծ իշխանը։

Իր հօրը գերի տարուելէն յետոյ Աշոտ սկսաւ երկիրը կառավարել։ Իր խելացի գործերովը ան սիրելի եղաւ բոլորին, նոյն իսկ ամիրապետին, որ զինքը «իշխանաց իշխան» անուանեց։

Ան ունէր 40,000 նոց բանակ մը և յաղթեց Զահապ անունով պարսիկ իշխանի մը, որ 80,000 զօրքով իր վրայ կուգար կոխւի։

ԱՇՈՑ ԹԱԳԱԽՈՐ ԿԸ ՊԱԱԿՈՒԻ. — Աշոտ ամիրապետէն խնդրեց որ բանտարկուած նախարարները ազատ արձակէ։ Ամիրապետը ընդունեց։ Նախարարները երբ վերադարձան իրենք ալ

խնդրեցին ամիրապետէն որ Աշոտը թագաւոր նշանակէ։ Ամիրապետը աս ալ ընդունեց և 885 թուականին ան թագաւոր օծուեցաւ։ Հայերը շատ ուրախացան որ կրկին թագաւորութիւն ունեցան։ Այսպէս հաստատուեցաւ Բագրատունեաց թագաւորութիւնը որ տեւեց մինչև 1045 թուականը։

ԱՇՈՑԻ ԳՈՐԾԵՐԸ. — Աշոտ խելացութեամբ կառավարեց իր երկիրը։ Հոգ տարաւ ժողովրդեան և աւերակները վերաշինեց։

Դաշինք կապեց շրջակայ երկիրներու թագաւորներուն հետ և հայ նախարարները իրեն բարեկամ ըրաւ։

Յետոյ ելաւ իր երկիրը պտտելու և իր ժողովուրդը տեսնելու։ Հասաւ մինչև յունաց կայրութեան մայրաքաղաքը՝ Պոլիս, և անոնց կեւոն Ա. կայսեր հետ բարեկամութեան դաշինք կապեց։ Հազիւ վերադարձած մեռաւ։

ԱՇՈՑԻ ՅԱԶՈՐԴԻՆԵՐԸ. — Աշոտ Ա. ին յաղթեց Սմբատ Ա., և ասոր ալ Աշոտ Բ. երկաթ։ Այս երկու թագաւորները շարունակ պատերազմեցան Արաբներու դէմ Հայաստանի մնացեալ մասերն ալ գրաւելու համար, բայց չյաջողեցան և Հայաստան շատ վնասուեցաւ։


ԴԱՍ Է.

ԲԱԳՐԱՏՈՒԻՆԻ ՄԵԾ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ

ԱԲԱՍ, ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱՆ, ՍՄԲԱՏ Բ. ԵՒ ԳԱԳԻԿ Ա.

ԱԲՈՅ. — Աշոտ Երկաթի յաջորդը՝ Աբաս՝ վերջ տուաւ կոխներուն և իր դրացիներուն հետ խաղաղութեամբ ապրեցաւ։ Ան միայն մէկ անգամ ստիպուեցաւ պատերազմիլ Աբխազաց թէր թագաւորին դէմ, որ լուր դրկած էր իրեն թէ պիտի դար յունաց կերպով օծելու այն եկեղեցին զոր Աբաս կը շինէր կարս քաղաքին մէջ։ Աբաս բռնեց թերը և այդ եկեղեցին ցուցնելէ յետոյ անոր՝ աչքերը փորեց։ Աբասի ատեն Հայաստան յառաջդիմեց և զօրացաւ։

ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱՆ. — Բագրատունեաց ցեղին նշանաւոր թագաւորներէն է Աշոտ Ողորմածը։ Ան ունէր մեծ բանակ մը և բոլոր թշնամիները կը վախնային իրմէ։ Այդ բանակովը ան յաղթեց Համտուն անունով արար զօրապետին որ կուգար Հայաստանը աւրելու։ Յունաց Յովհաննէս Զմշկիկ կայսրն ալ փորձեց Հայաստան



Առաջ Ողորմածի դամբարանը

մտնալ, բայց տեսնելով Աշոտի ուժը ետ դարձաւ։ Իր եղբայրը՝ Մուշեղ՝ որ փառասէր մարդ մըն էր, ինքզինըը կարս քաղաքին մէջ թագաւոր պսակել տուաւ և Աշոտ չուզելով պատերազմիլ իր եղբօրը դէմ, ընդունեց անոր թագաւորութիւնը։

Ան այնքան բարեսիրու և աղքատասէր էր որ սեղան չէր նստեր եթէ քովը աղքատ մը չունենար։ Ատոր համար զինքը կոչեցին Ողորմած։ Աշոտ հիմնեց ժողովուրդին օգտակար շատ մը հաստատութիւններ — վանքեր, դպրոցներ, անկելանոցներ և այլն, և անոնց նուիրեց շատ մը կալուածներ, որպէսզի անոնց հասոյթովը պահուին։ Աշոտ Անի քաղաքը չէնցուց ու դարդարեց և զայն ըրաւ իր մայրաքաղաքը։



Բագրատունեաց պալատին նակար


ՍՄԲԱՏ ԵՒ
ԵԽ ԳԱԳԻԿ Ա. —
Այս երկու թա-
գաւորներուն օ-
բով եւս Հայա-
տան խաղաղ ապ-
րեցաւ։ Հայ ժո-
ղովուրդը շատ-
ցաւ և հարստա-
ցաւ, երկրագոր-
ծութիւնը, վա-
ճառականութիւնը
և արհեստները
առաջ դացին և



Գագիկ Ա. ի արձանը

Անի նշանաւոր քաղաք մը դարձաւ։ Կ'ըսեն թէ
ան ունէր 1001 եկեղեցիներ և մէկ միլիոն
բնակիչ։

Հայաստանի քանի մը գաւառները եւս զատւուելով առանձին թագաւորութիւններ կազմեցին, այնպէս որ, այս շրջանին, մեր հայրենիքը բաժնուած էր եօրը բազաւորութիւններու :



Հայաստանի եօրը բազաւորութիւնները

ԴԱՍ Ը.

ՅՈՎՀԱՆՆԵՍ - ՍՄԲԱՏ


ՅՈՎՀԱՆՆԵՍ - ՍՄԲԱՏ. — Գաղտիկ Ա. ի յաջորդեց իր որդին՝ Յովհաննէս-Սմբատ, որ թէև բարիւ բայց թոյլ և վախկոտ մարդ մըն էր։ Յովհաննէս ունէր եղբայր մը Աշոտ անունով, որ քաջ և աշխոյժ էր և շատերը կ'ուզէին որ ան ըլլայ թագաւոր։ Աշոտ նոյնիսկ պատերազմ բացաւ իր եղբօր դէմ ու յաղթեց անոր, սակայն հայ մեծերը հաշտեցուցին զանոնք Յովհաննէսի թագաւորութիւնը բաժնելով երկու մասի։ Յովհաննէս-Սմբատ զաւակ չունենալով, իր մահէն յետոյ Աշոտ պիտի ըլլար երկու մասերուն ալ թագաւոր։

Սակայն Աշոտ գոհ չէր և կ'ուզէր շուտ հասնիլ իր նպատակին։ Անդամ մը սուտ հիւանդ ձեւացաւ և լուր զրկեց որ եղբայրը քովը գայ տեսնուելու։ Յովհաննէս խաբուելով զնաց և թակարդի մէջ ինկաւ։ Աշոտ իր եղբայրը իշխանի մը յանձնեց որ հեռու տեղ մը տանի և սպաննէ, բայց իշխանը զայն աղատ արձակեց։

Այս ատեններ Հայաստանի վրայ արշաւեցին նոր թշնամիներ — Սելճուքեան թուրքեր։ Անոնք

շատ վեասներ տալէ յետոյ Հայոց, զացին գրաւեցին Պարսկաստանը և հոն կազմեցին նոր թաւդաւորութիւն մը։ Անոնց պետն էր Տուղրիլ պէկ անունով անգույթ իշխանը։

Անին ԾԱԽԵԼՈՒ ԹՈՒՂԹԸ. — Այս ժամանակներ յունաց կայսրը, բանակով մը Հայաս-




Ախուրեան գետը եւ Անիի աւերակներէն մաս մը տանի հիւսիսային կողմերէն կ'անցնէր Վրացւոց վրայ պատերազմի երթալու համար։ Յովհաննէս-Սմբատ վախնալով որ ան իր վրայ ալ պիտի գայ, նամակ մը զրկեց կայսրին և խոստացաւ իր մահէն յետոյ Անին անոր յանձնել։ Կայսրը ի հարկէ շատ ուրախացաւ։ Բայց իր

յաջորդը, չուղելով ուրիներուն իրաւունքը
յափշտակել, երբ զգաց թէ սկիտի մեռնէր, հայ
քահանայ մը կանչել տալով քովը, անոր
տուաւ նամակը, պատուիրելով որ տանի իր
թագաւորին տայ: Այս քահանան սակայն նամա-
կը պահեց և տուաւ նոր կայսրին և փոխարէնը
շատ դրամ ստացաւ անկէ:

Այս բաներէն քիչ յետոյ մեռաւ Յովհան-
նէս-Սմբատը, իսկ անկէ առաջ մեռած էր իր
եղբայրը, ձգելով Գագիկ անունով տղայ մը:

Յունաց կայսրը, Միքայէլ, լուր դրկեց և
Անին պահանջեց, բայց Հայերը մերժեցին:
Ասոր վրայ, կայսը չըրս անդամ բանակ դրկեց
Հայոց վրայ, բայց անոնք միշտ յաղթուեցան
ու փախան:



Անիի Ս. Գրիգոր Եկեղեցին

ԴԱՍ Թ.

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՎԱԽԱՆԸ

Գ Ա Գ Ի Կ Բ.

ԳԱԳԻԿ ԹԱԳԱԿԱՐՈՒ ԿԸ ՊԱԿՈՒԻՒ.— Այս
յաղթութիւններէն յետոյ Հայերը թագաւոր
պսակեցին Գագիկ Բ.ը, որ թէև փոքր, բայց քաջ
և հայրենասէր էր և շատ կը սիրուէր իր ժո-
ղովուրդէն:

Բայց այն ատեն Հայոց մէջ կար Վեստ-
Սարգիս անունով իշխան մը, որ շատ փառասէր
մէկն էր և կ'ուղէր կամ ինքը ըլլայ թագաւոր,
և կամ Հայստանը տայ Յոյներուն: Անիկա
շատ դժուարութիւններ տուաւ Գագիկին, որ
ստիպուեցաւ զայն բանտարկել, բայց յետոյ
խարուելով անոր շողոքորթ լեզուէն, բանտէն
հանեց և իրեն խորհրդական ըրաւ: Վեստ-Սար-
գիս միշտ լուր կը դրկէր Յոյներուն որ Անին
պահանջեն: Կայսրը նորէն քանի մը անդամ
բանակ դրկեց Հայոց վրայ, բայց անոնք միշտ
յաղթուեցան:

ԳԱԴԻԿ ԳԱՀԵՆ կը ԶՐԿՈՒԻ. — կայսրը այն ատեն որոշեց խորամանկութեամբ իր նպատակին հասնիլ: Նամակներ գրեց Գագիկին և Պոլիս հրաւիրեց զայն, երդում ալ ընելով որ ու է նեղութիւն պիտի չի տայ: Գագիկ, խարուելով, կայսեր քով գնաց ու քանի մը օր մեծ պատիւներով պահուեցաւ: Բայց յետոյ կայսրը սկսաւ Անին պահանջել: Երբ Գագիկ մերժեց, կայսրը զինք աքսորեց:

Այս լուրը երբ Հայաստան հասաւ քանի մը իշխաններ և կաթողիկոսը կայսեր նամակ գրեցին և ըսին թէ իրենք Անին կը յանձնեն, եթէ փոխարէն առատ նուէրներ ստանան: կայսրը շատ նուէրներ տուաւ անոնց և Անին ստացաւ: Գագիկ երբ իմացաւ, շատ զայրացաւ, լացաւ, բայց անօգուտ: ստիպուեցաւ ընդունիլ: կայսրը կապադովկիոյ մէջ Պիզու անուն քաղաքը տուաւ անոր, նաև ուրիշ նուէրներ ըրաւ, և Գագիկ հոն քաշուեցաւ:

Այս կերպով վերջացաւ Բագրատունեաց թաղաւորութիւնը 1045 թուին:

ԳԱԴԻԿ Բ. Ի ՄԱՀԸ. — Սակայն Գագիկ չմոռացաւ իր ազգը և երբ տեսնէր որ Յոյները կը չարչարեն Հայերը, վրէժը կը լուծէր:

Անդամ մը իմացաւ թէ յոյն եպիսկոպոս մը շուն մը ունի, որուն անունը Արմէն գրած է: Քանի մը կտրիճներ հետը առած այդ եպիսկոպոսին տունը գնաց և ուղեց շունը տեսներ: Եպիսկոպոսը, «Արմէն, Արմէն» ըսելով շունը կանչեց:

— Ինչո՞ւ անունը Արմէն դրած ես, հարցուց Գագիկը:

— Որովհետեւ պղտիկ է, պատասխանեց Եպիսկոպոսը:

— Այնպէս է, ըսաւ Գագիկը, տեսնենք Հայն է պղտիկը թէ Յոյնը, և նշան ըրաւ իր կտրիճներուն: Անոնք շունն ու իր տէրը մէկ պարկի մէջ զրին և այնքան ծեծեցին կենդանին որ ան կատղած տէրը խածնելով մեռցուց:

Բայց Յոյներն ալ զայրացան Գագիկին և օր մը խորամանկութեամբ զայն բռնեցին ու Կիղիստրա բերդէն կախելով մեռցուցին: Անոնք Կիղիստրա բերդին տէր Մանտալեան եղբայրներն էին, որոնք սակայն, յետոյ, իրենց պատիժը կրեցին:



3. ՍԵԼՃՈՒՔ ԹՈՒՐՖԵՐՈՒԻ ԱՐՇԱԿԱՆ ՔԸ

ԴԱՍ Ժ.

ՏՈՒՂՐԻԼԻ ԵՒ ԱԼՓ-ԱՍԼԱՆԻ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՈՒՂՐԻԼ, ՊԵԿ.— Յոյները թէւ տիրացան չայաստանին, բայց երկար ժամանակ չկրցան զայն պահել իրենց ձեռքը։

Պարսկաստանի թագաւորը՝ Տուղրիլ Պէկ, բանակ մը դրկելով մեր երկիրը շատ մը տեղեր աւրեց և բնակիչները ջարդեց։

Վերջապէս Յոյները բանակ մը դրկեցին այս թշնամիներուն դէմ. անոնց միացան նաև հայ իշխաններ և Վրացիներու թագաւորը, բայց յաղթուեցան։

Յետոյ Տուղրիլ ինք եկաւ չայաստան։ Հայ իշխաններ և կարսի Գագիկ թագաւորը անոր առաջ ելան և յաղթուեցան։ Թաթուլ քաջ սպարապետը, որ վիրաւորած էր թուրք մեծ իշխանի մը զաւակը, գերի բռնուեցաւ և տարուեցաւ Տուղրիլի առջեւ։ Տուղրիլ անոր ըստ «Եթէ այս տղան առողջանայ՝ դուն ալ ողջ կը

մնաս, իսկ եթէ մեռնի դուն ալ պիտի մեռնիս»։ Թաթուլ անվախ կերպով պատասխանեց. «Եթէ հարուածը իմս է չի առողջանար»։ Իրաւ ալ իշխանին զաւակը մեռաւ, և Տուղրիլ, Թաթուլին աջ թեւը կտրելով անոր հօրը դրկեց ըսելով. «Տղադ քաջ բազուկէ մը զարնուած է»։

ԱԼՓ-ԱՍԼԱՆ.— Տուղրիլէն յետոյ Հայաստան արշաւեց իր յաջորդն ու եղբայրը՝ Ալփ-Ասլան, որ եկաւ գրաւեց Սնին, զայն կործանեց ու բնակիչներէն շատերը կոտորեց կամ դերի տարաւ։

Յետոյ լուր դրկեց կարսի Գագիկ թագաւորին որ իրեն հնազանդի։ Գագիկ սուզի զգեստներ հագած ընդունեց Ալփ-Ասլանի դեսպանները, որոնք երր իրեն հարցուցին թէ ինչո՞ւ սուզ պահեր էր՝ Գագիկ պատասխանեց. «Քանի որ իմ բարեկամ Տուղրիլ պէկը մեռեր է, ես պէտք է որ սուզ պահեմ»։ Ասոր վրայ Ալփ-Ասլան եկաւ տեսնուեցաւ Գագիկին հետ և խաղաղութեան դաշինք կապելով հեռացաւ։

Բայց Գագիկ թագաւորը մտածելով որ այդ վայրենի մարդոց հետ երկար ատեն բարեկամ մնալ անկարելի պիտի ըլլայ, իր երկիրը յունաց կայսեր տուաւ և փոխարէն ուրիշ քաղաք մը ստանալով Փոքր Հայքի մէջ, հոն փոխադրուեցաւ, Սնիի և Վանի թագաւորներուն պէս։

4. Կիլիկեան ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԱՆ
(1080-1375)

ԴԱՍ ՃԱ.

Ա. ԻՇԽԱՆԱՊԵՏՍՈՒԹԵԱՆ ՃՐՁԱՆ


ԿիլիկիիԱ. — Կիլիկիա վորքը երկիր մըն է որ
կը գտնուի Միջերկրական ծովու հիւսիս-արե-
ւելեան կողմը։ Ան շրջապատուած է հիւսիսէն՝
Տաւրոսեան, իսկ արեւելքէն՝ Այանոսեան լեռ-
ներով։ Ան կը բաժնուի երկու մասի — լեռնա-
յին և դաշտային։ Դաշտային մասը բարեբեր է
և ջրուած ձիհուն, Սիհուն և Կալիկադնոս գե-
տերով։

Կիլիկիոյ գլխաւոր քաղաքներն էին, Լեռ-
նային մասերու մէջ՝ Ախ, Հաճըն, Զէյթուն և
Մարաշ, իսկ գաշտային մասին մէջ՝ Տարսոն,
Ատանա, Մամեստիա:

Կիլիկիա ուներ բազմաթիւ բերդեր. Նշանաւոր են Անարդաբա, Լամբրոն, Հեթումի բերդ, Բարձր բերդ, Առիւծ, Ախ, Վահկա, Կապան եւն:


Հին ժամանակներու մէջ կիլէկիան գրաւած
են Ասորեստանցիք, Պարսկիները, Աղեքսանդր

Մակեղոնացին, Սելեւկեանները և Հռոմայեցիքները չայեցին դայն խլեցին Բիւզանդացիներէն:



ՀԱՅՈՅ ԳԱՂԹԸ ԴԵՊԻ ԿԻԼԻԿԻԱ. — ՅՈՒՆԵՐԸ
ՄԻՐԵԼՔ յետոյ Հայաստանի, չկրցան զայն

պաշտպանել Սելճուքեաններու դէմ։ Այնպէս ո՞ր
բաղմաթիւ հայեր ստիպուեցան թողուլ իրենց
հայրենիքը և ցրուիլ ուրիշ կողմեր։ Այս հայե-
րէն շատերը եկան հաստատուեցան կիլիկիա,
իրենց իշխաններուն հետ։



Անարզաբա նշանաւոր բերդին աւերակները


ՌՈՒԲԵՆ Ա., ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա., ԹՈՐՈՍ Ա.—

Կիլիկիոյ մէջ չայկական Անկախութեան հիմնա-
գիրն եղաւ Ռուբէն Ա. քաջ իշխանը (1080),
որ Գագիկ Բ. ի ազգականն էր և կ'ուզէր անոր
վրէժը լուծել Յոյներէն։ Ան փոքր իշխանութիւն
մը հաստատեց Տաւրոսեան լեռներու մէջ և 15
տարի իր երկիրը կառավարելէ յետոյ մեռաւ։
Իրեն յաջորդեց իր որդին Կոստանդին,

որ գրաւեց Վահկա նշանաւոր բերդը և օգնեց
Խաչակիրներուն որոնք Եւրոպայէն կուգային
երուսաղէմ երթալու և զայն մահմէտականնե-
րուն ձեռքէն աղատելու։

Իսկ Թորոս Ա. լեռնային մասերէն դաշտը
իջնելով գրաւեց Անարզաբա բերդաքաղաքը և
յաղթեց Թուրքմէններուն ու Գոնիայի Մելիք-
Շահ սուլթանին, որոնք Կիլիկիա արշաւած էին։
Թորոս Ա. յետոյ գնաց գրաւեց Կիզիստրա բեր-
դը (Կապաղովկիոյ մէջ) որուն իշխաններն էին
որ սպաննած էին Գագիկ Բ.։ Գրաւելէ յետոյ
բերդը, Թորոս հրամայեց որ իր առջև բերեն
մէջի գանձերը։ Այդ գանձերու մէջն էին նաև
Գագիկի սուրբն ու զգեստները։ Հայոց իշխան-
պետն ու իր զինուորները երբ ատոնք տեսան
յուղումէն լացին։

Թորոս քաջ մարդու այնպիսի մեծ հռչակ
մը ստացաւ, որ իր երկիրը կը կոչէին «Թորոսի
Երկիր»։



Պղինձնակ դրամ Թորոս Ա. ի

ԴԱՍ ՃԲ.

ԻՇԽԱՆԱՊԵՏՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

(Տ. Պ. Ռ.)

ԼԵՒՈՆ Ա. — ԼԵՒՈՆ ԹՈՐՈՍԻ ԵՂԲԱՋԻՆ ԷՐ և
իր քաջագործութեան համար «Տաւրասի Առիւծ»
կը կոչուէր։ Ան Յունաց ձեռքէն խլեց Ատանա,
Տարսոն և Մամեստիա մեծ ու վաճառաշահ քա-
ղաքները ու իր երկրին սահմանները հասցուց
մինչև ծովեղերք։

Սակայն այս քաջ իշխանին կեանքը դրժ-
բախտութեամբ վերջացաւ Անտիոքի խաչակիր
իշխաններուն պատճառաւ։ Յունաց Յովհաննէս-
կոմնենոս կայսրը եկած էր Անտիոքը դրաւելու։
Թորոս, որ Անտիոքիներուն դաշնակից էր, պա-
տերազմի խառնուեցաւ և այդ պատճառաւ
կայսրը նախ իր վրայ եկաւ, զայն բռնեց և իր
երկու որդիներուն՝ Ոուրէնի և Թորոսի հետ՝
Պոլիս տարաւ բանտարկեց։ Բանտի մէջ Ոուրէնի
աչքերը կուրցուց, իսկ Լեւոն սրտի ցաւէն
մեռաւ։

Յոյները Կիլիկիան ամբողջ դրաւեցին բայց
միայն ութը տարի կրցան զայն իրենց ձեռքին
մէջ պահել։

ԹՈՐՈՍ Բ. — Թորոս բանտէն արձակուելով
կայսեր բանակը մտած էր։ Ան կրցաւ օր մըն
ալ Պոլէն Անտիոք փախիլ և անկէ Կիլիկիա
մտնալ։ Հայերը երբ իմացան իր գալուստը, ամէն
կողմէ իր քով փութացին։ Իր քով եկան նաև
իր Մլեհ և Ստեփանէ եղբայրները և 10,000
զօրքով սկսան նորէն գրաւել Կիլիկիան՝ սկսելով
Լեռնային մասերէն։ Յունաց կայսրը Անդրոնիկոս
անունով զօրապետը դրկեց Թորոսը բռնելու,
բայց անձրեւու մութ գիշեր մը Թորոս կերու-
խումով զբաղած թշնամիին վրայ ինկաւ, շա-
տերը ջարդեց և շատերն ալ գերի բռնեց։ Գերի
իշխանները փրկագին տալով Թորոսի աղատուե-
ցան։ Թորոս այդ դրամները իր զինուորներուն
բաժնեց ու երբ Յոյները զարմացած պատճառը
հարցուցին, Թորոս պատասխանեց. «Կը վարձա-
տրեմ զինուորներս որպէսզի ուրիշ անգամ ալ
ձեզի գերի բռնեն»։

Թորոս յաղթեց նաև շրջակայ օտար իշ-
խաններուն։

Կայսրը տեսնելով Թորոսի քաջութիւնները
հաշտուեցաւ անոր հետ, ճանչնալով Հայոց իրա-
ւունքը։ Թորոսն ալ ընդունեց կայսեր գերիշ-
խանութիւնը։

ՄԼԵՀ ԵՒ ՈՌԻԹԷՆ.— Թողոսի մահէն յետոյ, եղբայրը՝ ՄԼԵՀ՝ ուզեց իշխանութիւնը յափշտակել։ Սակայն Հայերը չէին ուզեր, որովհետև ՄԼԵՀ շատ անկիրթ և անդուժ մէկնէր։ Ան նոյն իսկ երբեմն մահմետական եղած էր։ ՄԼԵՀ յաջողեցաւ Հալէպի Նուրէտափին սուլթանին օգնութեամբ իշխան ըլլալ։ Հայերը տեսնելով իր վասասակար ընթացքը, դաւադրութեամբ սպաննեցին զի՞նք։

Իրեն յաջորդեց իր Ստեփանէ եղբօր որդին Ուուրէն, որ գեղեցկադէմ, վեհանձն ու քաջ իշխան մըն էր։ Անդամ մը երբ Ուուրէն պատերազմի մէջ էր Լամբրոնի իշխան Հեթումի դէմ, Անտիոքի իշխանը զի՞նք խարդախութեամբ բռնեց ու բանտարկեց։ Ուուրէնի եղբայրը՝ Լեւոն՝ զայրացած, հայ զօրքերուն գլուխը անցաւ և պատերազմը շարունակեց, մինչև որ Հեթում ստիպուեցաւ արձակել տալ Ուուրէնը, որ, անկէ յետոյ, իշխանութիւնը իր եղբօրը յանձնեց և ինք վանք մը քաշուեցաւ։



Բ. ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՃՐՁԱՆ

(1199—1375)

ԴԱՍ ՃԳ.

ԼԵՒՈՆ ՄԵՇԱԳՈՐԾ

ԱՆՑՆՈՂ 100 ՏԱՐԻՆԵՐԻ. — Ուուրէն Ա. Էն մինչև Լեւոն Մեծագործը գրեթէ 100 տարի անցած էր։ Այս մէկ դարու ընթացքին Ուուրէնի յաջորդները գրաւեր էին ամբողջ Կիլիկիան։ Հիմա մէկը պէտք էր որ օրէնքներ և կարգ ու կանոն դնէր երկրին մէջ։ Այդ մէկը Ուուրէնի եղբայր Լեւոնը եղաւ, որ իր կատարած մեծ գործերուն համար Մեծագործ կոչուեցաւ։

Ան եղաւ Կիլիկիոյ առաջին թագաւորը, երկրին մէջ դրաւ նոր, եւրոպական օրէնքներ։

Երկրին սահմանները ընդարձակեց։

Ան շատ խելացի, արիասիրտ, ուազմագէտ ու խորագէտ մարդ էր և մեր թագաւորներու մէջ ամենէն նշանաւորներէն է։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱԻՈՐ. — Լեւոն նպատակ դրած

էր թագաւոր պատկուիլ և յարմար առիթին
կ'սպասէր։ Այդ ատեններ Եւրոպայէն Խաչակիր
նոր բանակ մը եկաւ Երուսաղէմ Երթալու, զայն
աղատելու համար Եգիպտոսի Սալահէտտին
սուլթանին ձեռքէն։ Այդ խաչակիր բանակին



Լեւոն Մեծագործ

պետն էր Գերմանիոյ Ֆրէտէրիք Շիկամօրուս
կայսրը, որ երբ Կիլիկիոյ մօտերը հասաւ, Լեւո-
նէն օգնութիւն խնդրեց իր բանակին համար,
խոստանալով զինքը թագաւոր պատկել։ Լեւոն

ամէն օգնութիւն ըրաւ, բայց կայսրը չկրցաւ
իր խոստումը կատարել, քիչ յետոյ խեղդուելով
Կիլիկիոյ գետերէն մէկուն մէջ։ Իր որդին սա-
կայն, Հենրիկոս, կատարեց հօրը խոստումը, Լա-
տինաց Պապին համաձայնութեամբ Լեւոնի դրկե-



Լեւոն Մեծագործի ոսկեդրամը

լով թագ և առիւծանիշ դրօշակ մը։ Լեւոն մեծ ու
փառաւոր հանդէսներով Հայոց թագաւոր պատկ-
ուեցաւ 1199 Յունուար 6ին։ Ուրախացան ոչ միայն
բոլոր Հայերը, այլ և օտարները, որոնք նուէրներ
և չնորհաւորական նամակներ դրկեցին իրեն։

Լեինի ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. — Լեւոն թագա-
ւորեց 34 տարի, սակայն իր իշխանութեան 12
տարիները կուիներով անցուց Անտիոքիներու
դէմ։ Պատճառը սա էր. —

Լեւոն արտ զաւակ չունէր, ուստի մտածեց իր
Ռուբէն եղբօր աղջիկը՝ Ալիս՝ կին տալ Անտիոքի

իշխանին տղուն՝ Պեմունդին, պայմանաւ որ եթէ
արու զաւակ մը ունենային ան ըլլար թէ՛
Անտիռքի և թէ Կիլիկիոյ թագաւորը։ Այս
կերպով Կիլիկիա աւելի պիտի մեծնար։

Սակայն Անտիռքի իշխանը շուտ մեռաւ և
իր եղբայրը եկաւ գրաւեց Անտիռքը փախցնելով
Ուուրէնը, որ Ալիսի զաւակն էր։ Լեւոն քանի
մը անգամ գնաց գրաւեց Անտիռքը և Ուուրէնը
իշխան նշանակեց։

Այս կոիւները տեւեցին 12 տարի։ Ի վեր-
ջոյ, Լեւոն տեսնելով որ Ուուրէնը չի կրնար
ինքզինքը պաշտպանել, իր միտքը փոխեց և
իրեն յաջորդ նշանակեց իր աղջիկը՝ Զապէլ, որ
գեռ փոքր ըլլալուն պատճառաւ Ատոմ և Կոս-
տանդին անունով երկու մեծ իշխանները իր
վրայ խնամակալ նշանակեց։

Լեւոն շատ մը պատերազմներ ալ ունեցաւ
շրջակայ սուլթաններուն հետ ու բոլորին ալ
յաղթեց։ Երբ Լեւոն մեռաւ, Կիլիկիա արդէն
մեծ ու զօրաւոր թագաւորութիւն մըն էր, որ
արեւելքէն կը հասնէր մինչև Եփրատ գետը։

Է Օ Յ Թ Ա Գ Ա Ր Ա Յ Ա Յ

Լեւոնի սուրագրութիւնը

ԴԱՍ ՃԴ.

ՀԵԹՈՒԻՄ Ա.

ՀԵԹՈՒԻՄ ԳԱՀԱԿԻՑ ԶԱՊԷԼԻ. — Զապէլի
խնամակալներէն Ատոմ Պայլը սպաննուած ըլ-
լալով, մասցեր էր միայն Կոստանդինը։ Ասիկա
հայ մեծամեծներու խորհուրդով, որոշեց Զապէլը
ամուսնացնել իր տղուն՝ Հեթումի հետ, Կիլիկիոյ
գահը ապահովելու համար խոռվարաններու



ՀԵԹՈՒԻՄ Ա.

դէմ։ Այս որոշումը գործադրուեցաւ և թագա-
ւոր պատկուեցաւ Հեթումը, որ 44 տարի իշխեց
իրեւ գահակից Զապէլի, և եղաւ մեր մեծ թա-

դաւորներէն մէկը։ Ան երկիրը խաղաղութեան մէջ պահեց։

ԹԱԹԱՐՈՅ ԱՐՃԱԿԱՆՔՆՔ. — Այս ատեններ Մոնկու Թաթարներու առաջնորդը՝ ձէնկիղ-Խան, բոլոր Թաթարները միացնելով, աշխարհակալութեան ելած ու գրաւած էր Զինաստան, Հնդկաստան, Պարսկաստան, Միջագետքը ու կը պատրաստուէր Հայաստանի վրայով Եւրոպա անցնիլ, Երբ մեռաւ։ Պարսկաստանի թագաւորին տղան, որ ձէնկիղ-Խանի դէմ մղուած պատերազմին մէջ իր հօր մահէն յետոյ փախած էր, ուղեց կրկին ձեռք ձգել իր երկիրը, բայց յաղթուելով՝ փախաւ Հայաստան ու շատ աւերներ գործելով, հասաւ մինչև Կիլիկիոյ սահմանները։ Հեթում՝ շրջակայ քրիստոնեայ և մահմէտական իշխաններու հետ միացած, անոր դիմաց ելաւ, ու յաղթելով անոր փախցուց կորտուաց լեռները, ուր ան սպաննուեցաւ։

Ձէնկիղ-Խանի յաջորդին օրովը, Թաթարները մտան Հայաստան և գրաւելով Սնին զայն գրեթէ կործանեցին։ Յետոյ, գրաւելով Հայաստանը Յունաց և Սելծուքներու ձեռքէն, մօտեցան Կիլիկիոյ։

Թաթարները կռապաշտ և մահմէտականներուն շատ հակառակ ըլլալով, Հեթում մտածեց

անոնց հետ դաշնակից ըլլալ։ Այս նպատակով Հեթում մինչև Թաթարիստան գնաց և Թաթարներու խանին հետ դաշինք կապեց, մահմէտականներու դէմ միասին կռուելու պայմանաւ։ Թաթարներն ալ խոստացան օգնել Հեթումին և Հայաստանի մէջ լաւ վարուիլ Հայոց հետ։

Երեք տարի յետոյ հայ և թաթար բանակները յարձակեցան մահմէտական երկիրներու վրայ։ Յաղթեցին Գոնիայի սուլթանին, Պաղտատի ամիրապետին, Հալէպի սուլթանին և հասան մինչև Դամասկոս, կործանելով և կողոպտելով բոլոր մայրաքաղաքները։ Երուսաղէմն ալ պիտի գրաւէին Եղիպտացիներէն՝ Երբ թաթար զօրապետը ստիպուեցաւ իր երկիրը վերադառնալ, Հայերը մինակ ձգելով։ Հեթում նորէն Թաթարիստան գնաց օգնական զօրք բերելու։ Եղիպտացիք Կիլիկիոյ վրայ արշաւեցին։ Հեթումի երկու որդիները՝ Լեւոն և Թորոս՝ անոնց զիմաց ելան. Լեւոն գերի ինկաւ և Թորոս սպաննուեցաւ։

Երբ Հեթում վերադառնաւ, շատ վշտացաւ այս պատահածները իմանալով և հաշտուելով Եղիպտացւոց հետ, ազատեց իր որդին, և տարի մը ետք վանք մը քաշուեցաւ, Լեւոնի յանձնելով գահը։

ԴԱՍ ՃԵ.


ԼԵՒՈՆ Բ. — ՀԵՂՈԱՄ Բ. ի յաջորդեց իր որ-
դին ԼԵՒՈՆ Բ., որ նմանապէս նշանաւոր մէկը ե-
ղաւ։ Արիասիրտ էր, վեհանձն և ոստմնասէր։

Իր օրով Եղիպտացիք Երկու անդամ Կիլիկիա արշաւեցին, առաջին անդամուն շատ վլաստուին, իսկ Երկրորդ անդամուն յաղթուեցան:

Անկէ յետոյ թաթար-եղիպտական նոր
պատերազմ մը տեղի ունեցաւ և Լեռն օդնեց
Թաթարներուն որոնք սակայն յաղթուեցան;
Ասոր վրայ, Լեռն ստիպուեցաւ հաշտուիլ Եղիպտացւոց հետ, իր կեանքի վերջին տարիները,
Լեռն շատ վիշտեր տեսաւ, Մեռան իր կինը և
երկու զաւակները, երկրին մէջ սովու ժանտախտ ծագեցաւ, բայց Լեռն ընաւ չի յուսա-
հատեցաւ և աշխատեցաւ օդնել թշուառներուն:

Հեթում Բ. եկ իր ՅԱԶՈՐԴՆԵՐԻ. — ԵՐՄ
ՀԵԹՈՒՄ Պահ բարձրացաւ (1289) ԿԻԼԻԿԻԱ
շուրջ կացութիւնը շատ փոխուած էր. Ամենէն
առաջ, Խաչակիրներու կողմէ Ասորիքի մէջ հաս-

տատուած Լատին իշխանութիւնները, որոնք Հայոց դաշնակիցներն էին, վերջացած էին մահմետականներու կողմէ։ Խոկ Եղիպտոսի սուլթանութիւնը, որ Կիլիկիոյ թշնամին էր, շատ զօրացած էր և կ'սպառնար հայոց թագաւորութեան։



Ասորիկի Լատին իշխանութիւնները

Միւս կողմէ, հայոց մեծ դաշնակիցները,
Թաթարներ, քիչ յետոյ մահմէտականութիւն ըն-
դունեցին և անոնք այ թշնամի դարձան։

Կիլիկիոյ թագաւորները, Հեթում և Երաշլորդները, մինակ մնացած, շարունակ զիմում
կը կատարէին վերոպացւոց՝ օդնութիւն ինդրե-
լով, բայց եւրոպացիք, մասնաւորաբար լատին-
ներու Պապը, Հայերէ կը պահանջէին կաթոլի-

կութիւն ընդունիլ որպէս զի օդնութիւն ստանան։ Խոկ Հայոց այս դիմումները շատ կը դաշրացնէին մահմէտականները։

Կիլիկիա ներքնապէս ալ շատ տկարացաւ հետզհետէ։ Սահմաններու վրայ գտնուող բերդերը աւրուեցան, Կիլիկիոյ հայ բանակը տկարացաւ և հայոց մէջ ալ երկպառակութիւն ինկաւ։ Լատին քարողիչները կրցած էին հայերէն մաս մը համոզել թէ հայոց եկեղեցին շեղած է Քրիստոսի վարդապետութենէն և թէ պէտք է կաթոլիկ դառնալ որպէս զի եւրոպացիք օդնեն իրենց։ Այսպէս մտածողները կը կոչուէին Միարար (Ունիքոր) որոնք կը պահանջէին որ հայ և լատին եկեղեցիները միանան։ Այս երկպառակութիւնը շատ վսասակար եղաւ Հայոց համար և փութացուց Կիլիկիոյ թագաւորութեան կործանումը։

Այս շրջանի թագաւորներն եղան՝ Հեթումէ յետոյ, Լեւոն Դ., Օշին, Լեւոն Դ., Գուխտոն Լուսիննեան, Կոստանդին Բ. և Կոստանդին Գ., որոնց ժամանակ, Եգիպտացիք, Թաթարներ, Թուրքմէններ և ուրիշ ցեղեր բազմաթիւ անդամներ Կիլիկիա արշաւեցին, բերդերն ու բազարները աւրեցին ու կողոպտեցին և բնակիչները ջարդեցին ու գերի տարին, Կիլիկիա կործանումի դուռը հասցնելով։

ԴԱՍ ՃԶ.

ԿԻԼԻԿԻԵԱՆ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽԱՆՈ

ԼԵՒՈՆ Ե. — Կիլիկիոյ հայոց վերջին թագաւորը եղաւ Լեւոն Ե., որ Կիպրոսի Լուսիննեան արքայական ընտանիքն էր դարձեալ։



ԼԵՒՈՆ Ե.


Ան թագաւոր պսակուեցաւ 1374 Սեպտեմբեր 14 ին Սիսի մէջ, նախ լատինական, յետոյ հայկական ծէսով և ասիկա պատճառ եղաւ որ

իր ժողովուրդը պաղի իրմէ։ Սն եթէ լաւ ժամանակներու մէջ թագաւոր ըլլար, կրնար մէծ վեհապետ մը դառնալ, սակայն հիմա երկիրը քայլայուած էր թշնամիներու արշաւանքներու, իշխաններու երկպառակութեան և կրօնական վէճերու պատճառաւ։

Սիցի ՊԱՅԾԱՐՈՒԽՄԸ ԵՒ ԼԵԽՄՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ. — Այս ատեններ եղիպառի սուլթանն էր ՄԷԼԻՔ-ԷՇՐԵՔ-Շապան, որ իր բանակին հրամայեց զրաւել Սիսը և վերջացնել հայոց թագաւորութիւնը։ Թշնամի բանակը խիստ շատ էր, մինչ լեւոնի զօրքը՝ քիչ։ Բայց լեւոն իր զինուրներուն և ժողովուրդին հետ երդում ըրաւ որ մինչեւ վերջին շունչը պիտի զիմադրէ։

Թշնամիները յարձակումով յաշողեցան գըրաւել Սիս քաղաքին մէկ մասը, բայց բերդը հերոսաբար կը զիմադրէր։ Ասոր վրայ, թշնամի բանակին պետը, նամակ մը գրելով լեւոնին յայտնեց՝ որ եթէ ան իր կրօնքը ուրանայ սուլթանը զինք նորէն թագաւոր պիտի պահէ։ Բայց լեւոն մերժեց։ Ասոր վրայ թշնամին աւելի սաստկութեամբ սկսաւ կուռիլ։ Խոկ ներսը պաշարը հատած էր և ժողովուրդը կը նեղուէր սովէն։ Ասկէ զատ, կարդ մը դաւաճաններ խոռո-

վութիւն հանելով բերդին մէջ փորձեցին սպաննել թագաւորը, բայց չյաշողեցան, որմէ յետոյ



սակայն անոնք բացին բերդին դուռները և թշնամին ներս մտաւ (1375 Ապրիլ 13) և գերի բռնելով թագաւորը, Մարիամ թագուհին,

ԲԵՆՆԱ աղջիկը ու Շահան փեսան տարաւ Հալէպ։ Գերիներու մէջ էր նաև հայոց Պողոս Ա. Կաթողիկոսը։

Քանի մը ամիս յետոյ գերիները բերուեցան Գահիրէ ուր սուլթանը պատուով պահեց զիրենք և աղատ արձակեց կաթողիկոսը։

Կիլիկիա, անկէ յետոյ, կառավարուեցաւ սուլթանին կողմէ ղրկուած կառավարիչներով, բայց հաղարաւոր հայեր հեռացան անկէ դէպի կիպրոս և ուրիշ վայրեր, մանաւանդ դէպի իտալիա, ուր հետզ հետէ ձուլուեցան տեղացիներուն հետ։

ԼԵԽՈՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ. — Լեւոնի կիրա ու աղջիկը գացին հաստատուեցան Երուսաղէմ, իսկ ինք՝ Լեւոնը, Եւրոպայի թագաւորներուն միջնորդութեամբ և մեծ դժուարութեամբ աղատուելով անցաւ Եւրոպա։ Ան հոն շատ աշխատեցաւ օգնութիւն ստանալով կրկին Կիլիկիա դալ, բայց չյաջողեցաւ և վիշտի մէջ մեռաւ 1393 նոյեմբեր 29 ին ու թաղուեցաւ կեղեստինեանց վանքին մէջ։ Իր դամբանը հիմա կը գտնուի Բարիզ, Աէն Տընի Արքայարանը։



ԴԱՍ ԺԷ.

ԼԵՆԿ-ԹԻՄՈՒՐԻ ԱՐՃԱԿԱՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԲԱԴՐՄԱՏՈՒՆԻՆԵՐԻՆ ՅԵՑՈՅ. — Բիւղանդիսնի կայսրերը նենգութեամբ տիրելէ յետոյ Հայաստանի՝ փճացուցին նաև հայ նախարարական սուները և հայ բանակն ալ ցրուեցին։ Այս կերպով երկիրը անպաշտպան մնաց և բարբարոս ժողովուրդներու արշաւանքին ենթարկուեցաւ։ Ճէլալէտափինի, Ճէնկիզ-Խանի և Սելջուքներու արշաւանքը արգէն տեսանք։ Ասկէ յետոյ Հայաստան ենթարկուեցաւ Լէնկ-Թիմուրի արշաւանքին։

Տուղրիլ-Պէկի յաջորդ Մէլիք-Շահի ատեն Հայաստան ատեն մը խաղաղ մնաց. բայց անոր մահէն յետոյ մեր երկիրը բաժնուեցաւ օտարազգի մանր իշխանութիւններու միջև։ Իրաւ է թէ կային նաև քանի մը պղտիկ հայ իշխանութիւններ եւս, ինչպէս՝ Տառչի և Մածնաբերդի իշխանութիւնները, Աղուանից թագաւորութիւնը, Ալւնեաց, Վասպուրականի և Տարօնի ու Սասունի իշխանութիւններով իրարմէ զատուած թշնամի իշխանութիւններով իրարմէ զատուած

ԸԼԼԱԼՈՎ չէին կրնար հայրենիքի փրկութեան
համար աշխատիլ :

Այս շրջանին հիւսիսային և արեւելեան
Հայաստանը ատեն մըն ալ Վրացիներու աղդեւ
ցութեան տակ ինկաւ, մանաւանդ անսնց թամար
թագուհիին օրով, որուն երկու զօրապետները՝
իվանէ և Զաքարիա, Վրաստանի սահմանը հա-
րաւի կողմէն հասցուցին մինչեւ Արաքս գետը :

Լէնկ - ԹիՄՈՒՐԻ ԱՐՃԱԿԱՆՔՆ. — Ճէնկիզ-
Խանի կայսրութիւնը տեւեց 1236 – 1387 : Այս
կայսրութեան քայքայումէն
յետոյ մէջտեղ ելաւ Լէնկ-
Թիմուրը վերանորոգելու հա-
մար այդ պետութիւնը : Ան
զրաւեց Պարսկաստանը, հա-
րաւային Ռուսիան, Հնդկաս-
տանը, ապա անցաւ Միջա-
գետք, Ասորիք, Սուրիա և
Պաղեստին, ամէն տեղ չլըս-
ուած անդթութիւններ գոր-
ծելով, շէն քաղաքները կործանելով և դրաւած
երկիրները կողոպտելով :

1387 ին ան մտաւ Հայաստան ու մեծամեծ
աւերներ գործեց: Գրաւեց Վանը և բնակիչներէն
շատերը բերդէն վար նետեց: Երկրագործու-



Լէնկ-Թիմուր.

թիւնը գաղրելով Հայաստանի մէջ սով ինկաւ
և ծնողները սկսան իրենց զաւակները մորթել
և ուտել:

Այսպէս անդթութիւններ գործելով այս
սարսափելի մարդը հասաւ մինչեւ Սեբաստիա:
Քաղաքը խարէութեամբ գրաւեց: Հարուստները
կողոպտեց և սպաննեց, անսնց կիները ձիերու
պոչին կապել տալով մեռցուց, մանուկները
տեղ մը հաւաքելով իր ձիաւորներուն կոխկրտել
տուաւ և 4000 հայ զինուորներ ողջ ողջ թա-
ղել հրամայեց:

Լէնկ - Թիմուր մեռաւ 1405 ին և իր կայս-
րութիւնն ալ քայքայուեցաւ: Այս անդամ Հա-
յաստանը կռուախնձոր եղաւ երկու թուրքմէն
յեղերու միջև որոնք կը կոչուէին Ա.գ. - Գօյուն և
Գարա - Գօյուն: Վերջապէս այս վերջիններուն
պետք՝ Ուղուն - Հասան՝ յաղթական հանդիսացաւ
և տիրեց Հայաստանին: Բայց այս կոխւներու
միջոցին նորէն մեծ սով մը ծագեցաւ: Հայաս-
տանի լեռները ծածկաւեցան սովամահներու
զիակներով և զաղանները դիակներուն հոտէն
առաջնորդուած մինչեւ դիւղեր ու քաղաքներ կը
մտնէին:



ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ՄԱՍՆ Ա.

Դ. Ա. Ա. Ա.

Ի՞նչ զիսկ Մարզպանաց շրջանի մասին. որո՞նք էին հաղածաններուն պատճառները: Ինչո՞ւ Յազկերս պատերազմեցաւ Յունաց և Հոներու դեմ: Ի՞նչ կ'ըսէր Միհր-Ներսէի իր համակովը և ի՞նչ պատասխանեցին Հայերը: Ինչո՞ւ հախարանները Պարսկասան զացին և ի՞նչ ըրին:

Դ. Ա. Ա. Ա.

Ի՞նչ որոշում տրուեցաւ Շահապիլանի ժողովին մեջ: Ի՞նչ զիսկ Աղուանից պատերազմի մասին: Ե՞րբ, ո՞ւր և ի՞նչպէս տեղի ունեցաւ Աւարայրի հակասանարշը: Ինչո՞ւ դատուեցաւ Վասակը:

Դ. Ա. Ա. Գ.

Ի՞նչպէս էր Հայաստանի վիճակը Վարդանաց պատերազմին յետոյ: Ո՞վ էր Վահան Մամիկոնեան և ի՞նչ ըրաւ: Ի՞նչ զիսկ Նուարսակի դաշինին մասին:

Դ. Ա. Ա. Գ.

Ինչո՞ւ Վարդան Գ. Մամիկոնեան ևոր կոխներու ձեռնարկեց և ի՞նչ եղաւ հետեւանիքը: Ի՞նչ զիսկ Գայլ Վահանի կոխներու մասին:

Այս երեք ապատամբութիւններէն յետոյ ի՞նչ վիճակի մեջ էր Հայաստանը:

Դ. Ա. Ա. Ե.

Ի՞նչ զիսկ Արաբներու մասին. անոնք ե՞րբ Հայաստան արշաւեցին և յետոյ ի՞նչ ըրին: Արաբները ի՞նչպէս

կառավարեցին մեր երկիրը: Ինչո՞ւ բուզաւ արաբական կայութիւնը եւ ի՞նչ ըրաւ Աշու Բագրատունին:

Դ. Ա. Ա. Զ.

Ի՞նչ զիսկ Աշու Ա. ի մասին. ե՞րբ և ի՞նչպէս բազառ պակուեցաւ ան: Ի՞նչ զործեր տեսաւ: Ի՞նչ զիսկ իր երկու յաջորդներու մասին:

Դ. Ա. Ա. Է.

Ի՞նչ ըրաւ Արաւ: Ի՞նչ զիսկ Աշու Ողորմածի մասին: Ի՞նչպէս էր Հայաստանի վիճակը Սմբատ Բ. և Գագիկ Ա. բազառութերու ժամանակ:

Դ. Ա. Ա. Ը.

Ի՞նչպիսի մեկն էր Յովհաննես - Սմբատը: Ի՞նչ դեպքեր պատահեցան իր օրոյ: Ի՞նչ պատճառաւ Յովհները ական պահանջեց Անին:

Դ. Ա. Ա. Թ.

Գագիկ Բ. ի՞նչպէս բազառու պակուեցաւ: Ի՞նչ կ'ուզեր Վես - Մարգիս: Ի՞նչպէս վերջացաւ Բագրատունաց բազառութիւնը: Ի՞նչպէս մեռաւ Գագիկ Բ.:

Դ. Ա. Ա. Ժ.

Ինչո՞ւ Տուղրիլ - Պեկը Հայաստան արշաւեց և ի՞նչեր ըրաւ: Ի՞նչ զիսկ Թարուղ ապարապետի մասին: Ի՞նչ ըրաւ Աղի - Ասլամը:

Դ. Ա. Ա. Ժ. Ա.

Նկարագրեց Կիլիկիան: Հայերը ե՞րբ գաղթեցին Կիլիկիա: Ի՞նչ զիսկ Ոռորէն Ա. ի, Կոստանդինի և Թորու Ա. մասին:

Դ Ա Ս Ս Փ Բ.

Խոսիլ Լեւոնի մասին: Թորոս ի՞նչպէս վերագրաւեց Կիլիկիան եւ ի՞նչ ըրաւ: Ի՞նչ զիտիք Մշենի եւ Ռուբենի մասին:

Դ Ա Ս Ս Փ Պ.

Ի՞նչ վիճակի մէջ եր Կիլիկիան: Լեւոն ի՞նչպէս յացողեաւ բազաւոր զլլա Կիլիկիոյ եւ իմանու Մեծագործ կոչուեաւ: Իմանու Լեւոն կոխոներ ունեցաւ Անտիոքի դեմ:

Դ Ա Ս Ս Փ Պ.

Ո՞վ եր Հերում Ա. եւ ի՞նչպէս բազաւոր եղաւ: Ի՞նչ զիտիք Թարաւաց արշաւանիի մասին: Խուեցէ՛ հայ-թարաւական զինակցուրեան եւ միասին մղուած պատերազմ-ներու մասին:

Դ Ա Ս Ս Փ Ե.

Ի՞նչպիսի մէկն եր Լեւոն Բ. եւ ի՞նչ դէպէեր պատահեցան իր օրով: Ի՞նչ վիճակի մէջ եր Կիլիկիան Հերումի եւ անոր յաջորդներու օրով: Ի՞նչ կը պահանջին Միարարները: Որո՞նք են այս շրջանի բազաւորները:

Դ Ա Ս Ս Փ Զ.

Ե՞րբ եւ ի՞նչպէս բազաւոր պատերազմաւ Լեւոն Ե.: Ի՞նչ վիճակի մէջ եր Կիլիկիան այն ատեն: Ի՞նչպէս վերշացաւ Կիլիկիոյ անկախուրիւնը: Ո՞ւր տարուեցաւ Լեւոն: Ի՞նչպէս ազատուեցաւ ան եւ ի՞նչ ըրաւ:

Դ Ա Ս Ս Փ Է.

Ի՞նչ վիճակի մասնուեցաւ Հայաստան Բագրատունիներէն յետոյ: Ի՞նչ ըրաւ Լեռն-Թիւնուրը: Ինչե՞ր ըրաւ ան Հայաստանի մէջ: Իրեկ յետոյ ինչե՞ր պատահեցան:

ՄԱՍՆ Բ.

ՆՈՐ ԴԱՐԵՐ

Դ Ա Ս Ս Ժ Ը.

1. ԹՈՒԻՐՔ ԵՒ ՊԱՐՍԻԿ ԿՈՒԽՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ԹՈՒԻՐՔԵՐՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ. — Օսմանեան Թուրքերն ալ Սելջուք Թուրքերու պէս կը բնակէին Թուրքիատան: Անոնք, Ճէնկիզ-Խանի արշաւանքին ժամանակ, իրենց երկիրը ձգելով 50,000 հոգիով փախան զէպի Հայաստան ու ժամանակը Ալվաթի քովերը բնակելէ յետոյ, բաժնուեցան երկու մասի: Վյոյ մասերէն մէկը գնաց բնակեցաւ Մարաշի կողմերը, իսկ միւսը՝ Բասեն և ասկէ ալ Գոնիա՝ Ալաէտտին սուլթանին երկիրը: Սուլթանը զանոնք բնակեցուց իր երկրին հիւսիսային կողմը ուր անոնք յոյներէն շատ մը տեղեր գրաւելով իրենց համար իշխանութիւն մը հաստատեցին: Քիչ յետոյ, երբ Ալաէտտինը մեռաւ այս թուրքերուն մեծը՝ Օս-

ման՝ ինքզինքը սուլթան հոչակեց և իր տէրութիւնն ալ իր անունով Օսմանեան կոչուեցաւ (1300):

Օսմանի յաջորդները աւելի մեծցուցին իրենց երկիրը և անոնցմէ մին՝ Մէհմէմէտ Բ.՝ գրաւեց կ. Պոլիսը 1453 ին և կործանեց յունական կայսրութիւնը:

Այս կարեւոր թուականը Միջին Դարերու վախճանը եւ նոր Դարերու սկիզբն է:

ՕՍՄՆ. ԹՈՒԲԵՐՈՒ ՄՈՒՏՖԵԼ ՀԱՅՈՍՏՈՆ.—
Այս ատեններ Հայաստան կը գտնուէր Ուղուն-
Հասանի տիրապետութեան տակ: Ասիկա պատ-
ճառ տուաւ որ սուլթան Մէհմէմէտը իր վրայ
պատերազմի դայ, յաղթէ իրեն և դրաւէ
արեւմտեան Հայաստանը 1375 ին, հայերու ալ
օդնութեամբը: Ուղուն-Հասանի յաջորդ՝ Շահ-
Իսմայիլ՝ ուղելով կորսուած տեղերը ետ առնել,
նոր պատերազմ մը բացաւ Օսմանցիներու դէմ,
բայց յաղթուեցաւ և Հայաստանի հարաւ-ա-
րեւմտեան մասն ալ ինկաւ Օսմանցիներու ձեռքը:
Աւելի ետքը Թուրքերը տիրեցին նաև արեւելեան
Հայաստանին, նոյն իսկ Վրաստանին և Ատրպա-
տականին մէկ մասին:

Այս կուիները տեւեցին երկու ու կէս դարէ

աւելի և մեծ աւերումներու ենթարկեցին մեր երկիրը:

ԹՐՔՈՅ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ. Եհ ՇԱՀ-ԱՊՊՈՅ.—
Սակայն թրքաց կառավարութիւնը շատ աւելի
դէշ էր քան պարսիկներունը: Հայ և քիւրտ մե-
ծամեծները, հայոց կաթողիկոսը ստիպուեցան
փախչել Պարս-

կաստան, Շահ-

Ապպասի քով, որ

անոնցմէ ամէն

տեղեկութիւն

առնելէ յետոյ,

1603 ին, մեծ բա-

նակով մը մտաւ

արեւելեան Հա-

յաստան և զայն

դրաւեց: Օսման-

ցիները եկան ետ

առնելու կորսուած

տեղերը: Շահ-Ապ-

պաս յոյս չունենալով պատերազմով յաղթելու,

մտածեց աւերակ երկիր մը թողուլ թշնամիին:

Ուստի խորհեցաւ Արարատեան դաշտի Հայերը

Պարսկաստան փոխազրել որ Օսմանցիները անօ-



ՇԱՀ-ԱՊՊՈՅ

Թութենէ նեղուին։ Իր անդուխ հրամանը գործադրուեցաւ և պարսիկ զինուորները հաւաքելով այդ կողմի Հայերը քշեցին դեպի Արաքս դետը։ Ով որ կը հակառակէր մեծ չարչարանքներու կ'ենթարկուէր։

Սակայն գետին վրայ պատրաստուած նաւակները բաւական չէին այդքան բազմութիւն մը շուտով փոխադրելու, իսկ Օսմանցիները մօտէին։ Ուստի Շահ - Ապահա հրամայեց ժողովուրդին գետ նետուիլ և լողալով միւս ափը անցնիլ։ Հաղարաւորներ խեղդուեցան այս կերպով՝ լուղաւ չգիտնալուն հետեւանքով։

Ազատուողները սակայն հանդիսաւ ապրեցան Պարսկաստանի մէջ։ Շահ - Ապահա դիւղացիները դիւղերու, իսկ քաղաքացիները քաղաքներու մէջ բնակեցուց և ամէն դիւրութիւն տուաւ անոնց։ Զուղա քաղաքին բնակիչներուն համար ալ նոր Զուղա անունով քաղաքը շինեց, Սպահան մայրաքաղաքին քով։

Սակայն Հայերը չէին կրնար մոռնալ իրենց հայրենիքը, մանաւանդ Ս. Էջմիածինը։ Սոոր համար Շահ - Ապահա մտածեց քակել դայն ու փոխադրել Պարսկաստան։ Հայերը իմանալով թագաւորին այս խորհուրդը շատ կաշառք տալով ետ կեցուցին դայն իր մտադրութենէն։

ԹՈՒՐՔ ԵՒ ՊԱՐՍԻԿ ԿՈՒԽՆԵՐԸ
(Շ.Ա.Բ.)

ԴԱՍ ԺԹ.

ԶԵՐՆԱՐԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՀԱՍՏԱՆԸ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ. — Գեղամայ լիճին արեւելեան եղերքէն մինչև կուր և երասխ գետերուն իրար միացած աեղը տարածուող երկիրը կը կոչուի Ղարաբաղ։ Շահ - Ապահա այս երկին կառավարութիւնը յանձնեց հայ իշխաններու, որոնք կը կոչուէին Մելիք։

Կային հինգ մէլիքութիւններ որոնք էին. Ջրաբերդ, Վարանդա, Կիւլիստան, Խաչեն և Տիղակ։ Մէլիքները հարկատու էին Պարսից թագաւորին. անոնց իշխանութիւնը ժառանգական էր. ունէին զօրք և բերդեր։ Ղարաբաղի բնակչութեան թիւը 300,000 էր։

Շահ - Ապահանէ ետք Հայաստան 80 տարիի չափ խաղաղութիւն վայելեց, սակայն անկէ յետոյ մեծ տակնուզրայութիւններ սկսան Պարսկաստանի մէջ, և այս վիճակէն օգտուելով

կիսավայրենի ցեղեր կովկաս լեռներէն իջնելով սկսան կողոպտել և աւերել արեւելահայաստանը: Այս պատճառաւ Մելիքները որոշեցին ազատել իրենց հայրենիքը պարսից լուծէն:

ԴԻՄՈՒՄ ԵՒՐՈՊԱՅԻ.—Մելիքները պատգամաւորութիւն մը դրկեցին Եւրոպա օգնութիւն ստանալու համար: Այդ պատգամաւորներէն ամենէն գործունեան էր Խորակէլ-Օրի իշխանը, որ յետոյ անցաւ Ռուսաստան և անոր Պետրոս Մեծ կայսրէն օգնութիւն խնդրեց Հայաստանը ազատելու համար:

Մեծն Պետրոս արդէն նպատակ ունէր հարաւի կողմէն իր երկիրը ընդարձակել. ուստի ան սիրով ընդունեց Խորակէլ-Օրիի առաջարկը և զայն իրը մեծ դեսպան դրկեց Պարսկաստան, այդ երկրի մասին տեղեկութիւններ բերելու իրեն և Հայերն ու Վրացիներն ալ պատրաստելու որ երբ ինք պա-



ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ

տերաղմի ձեռնարկէ Պարսից դէմ՝ իրեն օդնեն: Խորակէլ-Օրի կատարեց իր պաշտօնը և վերադարձաւ: Հայերն ու Վրացիներն ալ 40,000 զօրք պատրաստեցին միանալու համար կայսեր, որ եկաւ ու գրաւեց Սև և Կասպից ծովերուն եղերքաները ու յանկարծ վերադարձաւ, մինակ ձգելով երկու քրիստոնեայ ժողովուրդները Պարսիկներու և Օսմանցիներու դէմ, որոնք շատ նեղութիւն տուին իրենց, Ռուսերուն հետ միաբանած ըլլալնուն պատճառաւ:

ԴԱԿԻԻԹ ՊԵԿ.— Հայերը տեսնելով որ ռուսերէն յոյս չկայ, դիմեցին Դաւիթ Պէկին, որ Վրաստանի մէջ մեծ անուն հանած էր իր քաջութիւններովը: Դաւիթ Պէկ եկաւ Հայաստան զայն պաշտպանելու համար: Շուտով իր շուրջ հաւաքուեցան հայ անվախ երիտասարդներ ու Դաւիթ երկիրը մաքրեց թշնամիներէ: Իր զինուրներուն թիւը բարձրացաւ 7000 ի, որոնց վրայ հրամանատար կարգեց Մխիթար սպարապետը:

Օսմանցիք տեսնելով որ Դաւիթի ուժը հետզետէ կ'աւելնայ, պատերազմի եկան իր վրայ: Անոնք եկան պաշտպանեցին Հալիձոր բերդը ուր ամրացած էր Դաւիթ Պէկը խումբ մը քաջերով: Կոռուի տաք միջոցին Մխիթար և Տէր Աւետիք քահանան խումբ մը կտրիճներով բերդին

գաղտնի զուռներէն զուրս ելան և սկսան զար-
նել թշնամին կոնակէն։ Թուրքերը շփոթած փա-
խան հայոց ձեռք ձգելով շատ աւար և 148
դրօշակ։ Բայց թուրքերը երկրորդ անգամ եւս
եկան պաշարեցին Հալիձորը։ Այս անգամ ալ
Դաւիթ ուրիշ հնարք մը դառւ։ Մութ գիշեր մը
ան քանի մը մատակ ձիեր ձգեց թշնամի բանա-
կին ձիերուն մէջ։ Կենդանիները մեծ աղմուկ մը
բարձրացուցին ու շփոթութիւն ձգեցին թուրքե-
րու մէջ, որոնք կարծելով թէ հայերն են որ
կրկին յարձակած են իրենց վրայ, զիրար չար-
գելով փախան։

Դաւիթ յաղթեց նաև չըջակայ պարսիկ
խաներուն։ Այնպէս որ, երբ 1728 ին ան մեռաւ
Դարաբաղ բոլորովին անկախ երկիր մըն էր արդէն։

Դաւիթին յաջորդեց Մխիթարը, որուն օրով
Օսմանցիները կրկին Դարաբաղ մտան և ան-
դժութիւններ գործեցին։ Քիչ վերջ Մխիթարը
սպաննուեցաւ վատ հայերու ձեռքով և Մելիք-
ներու սկսած գործն ալ չկրցաւ շարունակուիլ։

Թուրք և պարսիկ կո-իւները տակաւին ատեն
մըն ալ շարունակուեցան։ Վերջին անգամը,
1743 ին, թուրքերը յաղթուելով, պարսիկներուն
ձգեցին Երեւանի և Նախիջեւանի նահանգները
և այսպէս մնաց մեր երկիրը մինչև Ռուսերուն
Երեւան գալը։

ԴԱՍ Ի.

2. ՌՈՒՍԱՑ ԵՐԵՒԱՆ ԳԱԼԸ

Մեծն Պետրոսէ յետոյ Հայոց վրայ մաս-
նաւոր ուշադրութիւն դարձնողը եղաւ Եկատե-
րինէ թագու-

հին։ Սակայն

Եկատերինէի

նպատակը ոչ

թէ Հայաստա-

նը ազատա-

գրել, այլ զայն

գրաւել էր, իր

երկրի վաճա-

ռականութիւ-

նը առաջ տա-

նելու համար։

Իրեն գործա-

կիցներն եղան

Յովհաննէս Լազարեան և Յովսէփ արքեպիսկո-

պոս Արղութեան, որոնք սակայն չէին գիտեր


կայսրուհին բուն նպատակը։

Այս չըջանին Դարաբաղի Մէլիքները շատ



Եկատերինէ Թագուհի

տկարացած էին Մեծն Պետրոսի խարէութեան հետեւանքով։ Ասկէ զատ, այդ Մէլիքներու միջև գժառութիւն կյանալով, առիւթէն օդտուած էր Փանահ անունով թուրք մը, որ անոնց երկրին մէկ մասին վրայ հաստատած էր իշխանութիւն մը՝ նուշիի Խանութիւնը։



Պարաբար
ղի Մէլիքները

Յովհաննես Լազարեան

նայակ մը դրկելով Ռուսերուն իրենց հպատակութիւնը յայտնեցին անոնց ու խնդրեցին որ շուտով դան և դրաւեն կովկասը Պարսիկներու ձեռքէն։ Փանահի որդին՝ Իպրահիմը, ինքն ալ Ռուսերուն բարեկամ ձեւացաւ և պատճառ դարձաւ որ անոնք ուշանան։ Ասկէ օդտուելով Իպրահիմ խարէութեամբ ձերբակալեց հայ Մէլիքները որոնցմէ մէկը սպաննեց, իսկ միւսները ձգեցին իրենց երկիրը և փախան Շամքու, ուրկէ

շարունակեցին կռուիլ Իպրահիմի դէմ և ի վերջոյ հաստատուեցան Լոռի։

Այս կերպով վերջացան Ղարաբաղի Մէլիքութիւնները, դարձեալ չնորհիւ ոռւս կառավարութեան խարէութեան։

Ո-ՈՒՍԵՐԸ կը ՏԻՐԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ. — Վրաստանի թագաւորութիւնը, 18 րդ դարու վերջերը շատ տկարացած էր։ Վրաց վերջին թագաւորը՝ Գէորգի՝ որ շատ թոյլ մարդ մըն էր, իր հակառակորդներուն և Պարսից դէմ ինքզինքը պաշտպանելու նպատակաւ խնդրեց Եկատերինէի յաջորդ Պօղոս Ա. կայսրէն որ իրեն օգնէ։ Ռուսերը ընդունեցին և օգնական զօրք ղրկեցին Վրաստան։ Սնդամ մը ներս մտնալէ յետոյ Ռուսերը ամբողջովին գրաւեցին երկիրը, և 1801 ին վերջացնելով անոնց անկախութիւնը Վրաստանը իրենց երկրին միացուցին։

Վրաստանէ յետոյ կարգը Հայաստանի պիտի դար։ Ի հարկէ պարսիկները, որոնց կը պատկանէին կովկասեան երկիրները, ձեռքերը ծալլած պիտի չնստէին։ Ասկէ առաջ եկան մեծամեծ պատերազմներ, որոնք մեր երկրին մէջ տեղի ունենալով, շատ մը աւերներու պատճառ դարձան։

ԴԱՍ ԻԱ.

3. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Տիրանալէ յետոյ Վրաստանի՝ Ռուսերը պիտի
աշխատէին իրենց հարաւային սահմանը հասցնել
մինչև Արաքս գետը։ Այս նպատակով անոնք
մղեցին շարք մը պատերազմներ որոնք են։

Առաջին Ռուս-պարսկական պատերազմը։
Առաջին Ռուս-թրքական պատերազմը։
Երկրորդ Ռուս-պարսկական պատերազմը։
Երկրորդ Ռուս-թրքական պատերազմը։

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. —

Սկսաւ 1801 ին։ 1804 ին Ռուսերը գրաւեցին
Գանձակը և եկան պաշարեցին Երեւանը զոր
չկրցան առնել։ Յաջորդ տարիներուն, Ռուսերը,
զանազան միջոցներով, յաջողեցան գրաւել ա-
րեւելեան Հայաստանի շատ մը մասերը և ստի-
պել Պարսիկները որ հաշտուին իրենց հետ։
1813 ին կնքուեցաւ Կիւլիստանի դաշինքը որ Պարսից
կը քողուր Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները
միայն։ Հսել է թէ Ռուսերը գեռ չհասան Ա-
րաքսի գիծը։

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. —

Ան սկսաւ 1806 ին և վերջացաւ 1812 ին։ Թուր-
քերն էին որ, ֆրանսացւոց խորհուրդով, պատե-
րազմ բացին Ռուսաց գէմ։ Կոփուր մղուեցաւ
Երկու ճակատի վրայ՝ Սև ծովու հիւսիսային
կողմը՝ Եւրոպայի մէջ, և Հայաստանի հողին
վրայ՝ Կարս քաղաքի և Արփա Չայ գետին
եղերքը։ Ռուսերը միեւնոյն ատեն պատերազմի
մէջ ըլլալով Պարսից հետ, Հայաստանի մէջ
պաշտպանողական կոփու մղեցին միայն, և ջար-
դեցին թրքական բանակները։

Ինչպէս Ա. Ռուս-պարսկական պատերազմին
նմանապէս և հիմա, Հայերը մեծ ծառայութիւն-
ներ ըրին ռուսական բանակներուն, սակայն այս
պատճառաւ ալ անոնք իրենց վրայ հրաւիրեցին
մահմէտականներու (պարսիկ, թուրք, քիւրո)՝
բարկութիւնը և մեծ տանջանքներ կրեցին։ Հա-
յերը ռուսերը կը նկատէին իբրև ազատարարներ
և կ'աշխատէին փախչիլ անոնց գրաւած վայ-
րերը։ Ա. Ռուս-թրքական պատերազմը վերջա-
ցաւ 1813 ին, Ռուսերը շատ տեղ չգրաւեցին
Հայաստանի մէջ։

Բ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Անի-
կա սկսաւ 1826 ին և տեւեց միայն մէկ տարի։
Այս կոփուին պատճառը այն էր որ Պարսիկները

գոհ չէին կիւլիստանի դաշինքէն և կ'ուղէին իրենց կորանցուցած տեղերը ետ առնել։ Ուուսերը ոչնչացուցած ըլլալով իրենց դրաւած երկիրներուն մէջ պարսիկ խանութիւնները, այդ երկիրներուն մէջ մահմէտականները շատ դժգոհ էին և օդնութիւն կ'սպասէին Պարակաստանէն։

Պարսից բանակին հրամանատարն էր Ապակաս-



Ապակաս - Միրզա



Զօրավար Պատիվիչ

Միրզան, իսկ Ուուսերունը՝ Պասքեվիչ։ Ուուսերը ատեն մը շատ նեղը մնացին և քիչ կը մնար որ Շուշիի մէջ պաշարուած ջարդուէին, երբ օդնութեան հասաւ Մատաթեան քաջ հայ զօրապետը և Գանձակի առջև փայլուն յաղթանակ մը տա-

ըաւ։ Այս պատերազմին մէջ Ուուսերուն կողքին կը կուտէր նաև ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցին՝ կամաւոր դունդի մը գլուխիր անցած։ Անկէ յետոյ Ուուսերը յառաջանալով գրաւեցին նաև Երեւանը, գերի բռնելով պարսիկ զօրքն ու Հասան Խանը։ Երեւանի անկումը շատ ուրախացուց Հայերը։

Պատերազմը վերջացաւ Թուրքմէնչայի դաշինքով և Երեւանի ու Նախիջեւանի խանութիւններն ալ Ուուսաց մնացին։ Բայց գրաւուած այս երկիրներուն բնակչութիւնը շատ քիչ էր, ուստի, երբ Ուուսերը Արաքս գետին հարաւային մասերն ալ արշաւեցին, թելագրեցին այդ կողմերու Հայոց նոր գրաւուած վայրերը փոխադրուիլ։ 50,000ի մօտ հայ ընտանիքներ Պարսկաստանէն գաղթելով գացին այդ երկու խանութեանց մէջ բնակելու, բայց շատերը հիւանդանալով մեռան, ո և է պատրաստութիւն տեսնուած չըլլալով նախալէս իրենց համար։

Պասքեվիչ զօրապետը փառամոլ և նախան-



Ներսէս Արքեպիսկոպոս Աւսարակեցի

ձու մարդ մը ըլլալով. քիչ յետոյ, սուտ ամբաստանութեամբ Հայաստանէն աքսորեց Ներսէս Աշտարակեցին և Մատաթեան իշխանը։ Ուստի կառավարութիւնը իր նոր գրաւած վայրերէն կազմեց առժամանակեայ կառավարութիւն մը «Հայկական Շրջան» անունով, բայց յետոյ ջնջեց ատիկա և այդ մասերը կցեց Ռուսաստանի։

Արաքս գետը անկէ յետոյ եղաւ սահմանագիծ ընդմէջ Ռուսիոյ և Պարսկաստանի։

ՆԵՐՍԻՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ. — Ներսէս Աշտարակեցին մեր մեծ եկեղեցականներէն մէկն է։ Անշատ աշխատեցաւ Հայաստանի աղատութեան համար և այդ պատճառաւ էր որ ան աքսորութեցաւ։ Ան նաև ուսումնասէր և կրթասէր էր։ Վրաստանի հայոց առաջնորդ եղած ատեն նուիրահաւաքութեամբ շինեց Թիֆլիսի Ներսէսեան բարձրագոյն վարժարանը և հիմնեց տպարան մը։

Ա.քսորէն վերադարձին, Ներսէս եղաւ հայոց կաթողիկոս։ Ան իր գործերովը մեծ անուն մը ձգեց մեր պատմութեան մէջ։



ՌՈՒՍ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԽ ՌՈՒՍ - ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԸ
(Շ. Բ. Բ.)

ԴԱՍ ԻԲ.

Բ. ՌՈՒՍ - ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ (1828-1829)

Այս պատերազմին պատճառը յունական ապստամբութիւնը եղաւ։ Յոյները քանից ապստամբած էին Թուրքերու դէմ, բայց չէին յաջողած։ 1821 ին անոնք նորէն փորձեցին իրենց երկիրը աղատել, բայց Թուրքերը մեծամեծ ջարդեր կատարեցին Յունաստանի մէջ։ Սուլթանը ապստամբութիւնը զսպելու դործը յանձնած էր իպրահիմ փաշային։ Եւրոպացիք ստիպուեցան միջամտել և բազմաթիւ ուաղմանաւեր զրկեցին նաւարին ուր անոնք ոչնչացուցին թրքական նաւատորմիզը։ Օսմանցիներու Մահմուտ սուլթանը ասկէ զայրացած պատերազմ բացաւ Ռուսիոյ դէմ։

Այս պատերազմն ալ տեղի ունեցաւ երկու ճակատի վրայ — Եւրոպայի մէջ և Հայաստանի կողմը։ Հայաստանի մէջ կռուող ուսւ բանակին հրամանատարն էր նորէն Պատքեվիչ, որ Հայոց օժանդակութեամբ, կարճ ատենէն դրաւեց

Կարս, Ախլցիսա և Արտահան քաղաքները և
շարունակելով իր յառաջիսաղացքը, յաղթեց
թրքական բանակին ու դրաւեց նաև էրզրումը:
Որուս բանակը հասաւ մինչև Բաբերդ: Եւրոպայի
կողմէն եւս Որուսերը յաղթական յառաջացան
մինչև Պոլսոյ քովերը և Սուլթան Մահմուտ
ստիպուեցաւ հաշտու-
թիւն խնդրել: Պա-
տերազմը վերջացաւ
Աղրիանապոլսոյ դա-
շինքով: Որուսերը
Հայաստանի կողմէն
Թուրքերուն վերա-
դարձուցին իրենց դրա-
ւած տեղերուն մեծ
մասը, մինչև Կարս,
իրենց պահելով քիչ
մը տեղ միայն, իսկ Եւրոպայի կողմէն Թուրքերը
ճանչցան Յունաստանի անկախութիւնը:



Սուլթան Մահմուտ

Այս պատերազմին մէջ եւս Հայերը, կամա-
ւոր գունդերով և ուրիշ միջոցներով օդնած
ըլլալով Որուսաց, մեծ վնասներու ենթարկուեցան
թուրքերու և քիւրտերու կողմէ, իսկ հաշտութեւ-
նէն յետոյ, Թուրքերու վերադարձուած տեղերէն
90,000 Հայեր դաղթեցին Որուսական բաժինը:

Վեճեմ ՊՈԼՍԱՀՈՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ.— Այս
պատերազմի ընթացքին, Պոլսոյ մէջ, ծանր
վէճեր պատահեցան Լուսաւորչական և Հայ-
կաթոլիկ հատուածներուն միջև:

Պոլսոյ Հայոց մէջ կային Լուսաւորչական
և Հայ-կաթոլիկ ամիրաներ: Ասոնք դաւառացի
հայեր էին որոնք Պոլիս գալով հարստացեր էին
և դրամ փոխ տալով թուրք փաշաներու անոնց
միջոցաւ պատրիարքներն անդամ կը փոխէին,
իրենց ուղած հոգեւորականը տեղը կը նստեց-
նէին և ազգին գործերը ուղածնուն պէս կը
վարէին: Լուսաւորչական և Հայ-կաթոլիկ
ամիրաները իրարու կը նախանձէին և այս
պատերազմի ժամանակ մինչև իսկ զիրար մատ-
նեցին կառավարութեան: Ժողովուրդն ալ
խառնուեցաւ այս վէճերուն. կառավարութիւնը
ստիպուեցաւ միջամտել. գլխաւորներէն ոմանք
գլխատեց, կախեց և Հայ-կաթոլիկներէն ահա-
գին բազմութիւն մըն ալ
Պոլսէն դէպի դաւառները
աքսորեց ձմեռ ժամանակ:
Բաւական թիւով մարդիկ
ճամբան մեռան ցուրտէն:



Ամիրաներու մէջ եղած
են սակայն ազգին օդտակար նշանաւոր մարդիկ
ալ, ինչպէս օրինակ Յարութիւն ամիրա Պէղճեան:

ԴԱՍ ԻԳ.

4. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՇՐՋԱՆ
(1836-1863)

ՊՈԼՈԺԵՆԻՔ. — Ուռուս - պարսկական և Ուռուս - թրքական պատերազմներու ընթացքին Երեւանի և Նախիջեւանի Խանութիւններու մէջ Հայոց թիւը մահմէտականաց թիւէն քիչ էր: Սակայն այդ պատերազմներէն յետոյ Հայերը մեծամասնութիւն դարձան այդ վայրերու մէջ: Ուռուս կառավարութիւնը Հայոց աղդային և եկեղեցական գործերը կառավարելու համար մասնաւոր օրէնք մը պատրաստեց որ կոչուեցաւ Պոլոժենիք (1836):

Բատ այս օրէնքին հայ եկեղեցւոյ պետն էր Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսը, որ կ'ընտրուէր ամբողջ Հայութեան կողմէ և կը վաւերացուէր Ուռուսաց կայրէն: Իրեն օգնական էր Ս. Սինօդը որ կը բաղկանար եօթը եկեղեցականներէ: Այս ժողովին կը մասնակցէր ուռուս կառավարութեան կողմէ նշանակուած մէկը, որ կը կոչուէր Պրօկուրօր, Գաւառներու առաջ-

նորդներն ալ ժողովուրդին կողմէ կ'ընտրուէին, և մեծ իրաւունքներ ունէին: Այս կերպով Ուռուսահայոց աղդային գործերուն մէջ կարգ ու կանոն մտաւ և ժողովուրդը օգտուեցաւ:

ԹԱՅՆՉԻՄԱՅԻ. — Վերջին պատերազմներէն յետոյ Թուրքիա շատ տկարացած էր: Այնչափ որ Եգիպտոսի Խպրահիմ փաշան Թուրքիոյ վրայ յարձակեցաւ և հասաւ մինչև Պոլսոյ գուռները: Ուռուսներն էին որ Թուրքիան փրկեցին, բայց Թուրքիան ալ դարձաւ տեսակ մը Ուռուսիոյ գերին: Անգլիա և Ֆրանսա, որոնք չէին փափաքեր որ Թուրքիա տկարանայ, ստիպեցին սուլթանը որ իր երկիրը բարեկարգէ: Ասոր վրայ սուլթան Ապտիւլ - խլ - Մէճիտ 1839 ին հրամանագիր մը հանեց որով արդարութիւն և հաւասարութիւն կը խոստանար իր ժողովուրդին, մահմէտականին և ոչ մահմէտականին: Բարենորոգութեան այս ձեռնարկը կը կոչուի Թանգիրմաք որ սակայն չի գործադրաւեցաւ, Թուրքիա մնաց նոյն յետամնաց վիճակին մէջ:

ՀԱՅ - ԿԱՅԹՈՂԻԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅ - ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ. — Հայ - կաթողիկները, երկար ատեն Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին ենթակայ էին: Սակայն 1830 ին անոնք ֆրանսական կառավա-

րութեան պաշտպանութեամբ զատուեցան և ունեցան իրենց առանձին Պատրիարքը Պոլսոյ մէջ։


1800 թուականներէն սկսեալ ամերիկացի և անգլիացի բողոքական քարոզիչներ եւս եկան մեր մէջ և ձրի հաց, հագուստ նաև ուսում տաւլով աղքատիկ տղոց, իրենց հետեւորդները ունեցան։ Ասոնք ալ Անգլիոյ դեսպանին պաշտպանութեան տակ էին։ Հայոց Պատրիարքարանը, ինչպէս կաթոլիկ հայերուն, նմանապէս և ասոնց դէմ հալածանք հանեց, բայց անօդուտ։ Անգլիոյ դեսպանին միջնորդութեամբ ասոնք ալ 1850 ին զատուեցան մեր եկեղեցիէն և ունեցան իրենց պետը կամ Ազգապետը, նորէն Պոլսոյ մէջ։

ԱԶԴԱՅԻՆ ՍՈՂՄԱՆԱԱԴՐՈՒԹԻՒՆ.— Թանգի-մաթի հրատարակութեամբ կառավարական բարձր դպրոցներ բացուեցան ուր Հայեր ալ սկսան յաճախել։ Միւնոյն ատեն հայ վարժարաններ եւս բացուեցան Պոլսոյ մէջ։ Այս վարժարաններէն ելլող աշակերտներէն ոմանք Եւրոպա գացին և բարձր ուսումներու հետեւելով, իբր բժիշկ, ճարտարապետ և այլն ետ դարձան։ Ասոնց մէջ նշանաւոր էին Գրիգոր Օտեան, Նիկոլայոս Պալեան, Նահապետ Ռուսինեան, Տօքթ. Սերգիչէն, Աղաթօն և այլն, որոնք կ'ուղէին աշխարհաբար լեզուն տարածել, Պատրիարքա-

րանը բարեկարգել և ազգային վարժարանները լաւ վիճակի մէջ դնել։

Պատրիարքարանը այս զարդացած երիտասարդներէն կազմեց Ուսումնական Խորհուրդ մը՝ Գլուխներու վրայ հսկելու համար։ Բայց այդ երիտասարդները աշտով չգոհացան։ Անոնք Պատրիարքարանի բարեկարգութեան համար ալ օրէնքներ գրի առին և մեծ դժուարութեամբ Պատրիարքանին ու թուրք կառավարութեան ընտանիքներ և վաւերացնել տուին։ Այս օրէնքով պատրիարքներն ու ամիրանները այեւս չէին Գրիգոր Օտեան կրնար իրենց ուղածին պէս աղդին գործերը վարել։ Այս օրէնքը կը կ'ոչուի Ազգային Սահմանադրութիւն։

Աղդ. Սահմանադրութեամբ, ժողովուրդէն կ'ընտրուէին 220 երեսփոխաններ՝ 160 ը Պոլսէն և 60 ը գաւառներէն։ Երեսփոխանական Ժողովը կ'ընտրէր Քաղաքական և Կրօնական Ժողովները։



Քաղաքական ժողովն ալ կ'ընտրէր Ուսումնական Խորհուրդը և Հոգաբարձութիւնները, որոնք կը վարէին ազգին գործերը։ Գաւառներու մէջ եւս, ուր որ Առաջնորդաբան կար, գործերը այս կերպով կը վարուէին։ Աղդ. Սահմանադրութիւնը մինչև հիմա կը գործադրուի մեր մէջ և ժողովուրդը օգտուեցաւ անկէ, ինչպէս Պոլոժենիէն օգտուեցան Ուսուաստանի հայերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԲ. — Սակայն Աղդային Սահմանադրութիւնը շատ մը պակասութիւններ ալ ունէր։ Այդ պակասութիւնները մատնանշողը եղաւ Խրիմեան Հայրիկը՝ իր պատրիարքութեան ատենը։

Այդ Սահմանադրութենէն մեծ օգուտ մը չկար գաւառի հայութեան համար, որ կը նեղուէր հարստահարութիւններէն։

Գաւառի առաջնորդներէն ամէն օր գանդատագիրներ կը հասցնէին Պատրիարքաբան՝ այդ հարստահարութեանց մասին։ Խրիմեան այդ գանդատաները Աղդ. Ժողովին տարաւ որ որոշեց կուռավարութեան դիմել և դարման մը խնդրել։ Այդ դիմումը կատարուեցաւ կառավարութեան Ան խոստացաւ յանցաւորները պատժել, բայց իր խոստումը չկատարեց և Հայոց նեղութիւնները հետզ հետէ աւելի շատցան։

ԴԱՍ ԻԴ.

5 Գ. ՌՈՒՍ-ԹՐՖԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1853-1855)

ԵՒ

ԶԷՅԹՈՒՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Գ. ՌՈՒՍ-ԹՐՖԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Այս պատերազմը կը կոչուի նաև Խրիմի պատերազմ։ Այս ժամանակներ Թուրքիա շատ տկարացած էր և Ուսուերը կ'ուզէին զայն բոլորովին իրենց ենթարկել։ Անոնք կ'ուզէին որ սուլթանը ընդունի թէ ուռասաց կայսրը Թուրքիոյ քրիստոնեաներաւն պաշտպանն է։ Եւ որովհետեւ սուլթանը մերժեց այս պահմանը Ուսուեր պատերազմ բացին անոր գէմ և Թուրքերը յաղթուեցան։

Բայց Թրանսա և Անդլիա չէին ուզեր Թուրքիոյ տկարացումը և Ուսուիոյ զօրացաւմը, ուստի ուրիշներու հետ ալ միաբանած օգնութեան հասան Թուրքիոյ և Խրիմի մէջ յաղթեցին Ուսուսաց։ Բայց Հայաստանի կողմէն Ուսուերը գրաւեցին կարս բերդաքաղաքը։

Պատերազմը վերջացաւ Բարիզի դաշինքով և երկու կողմէն գրաւուած տեղերը իրենց տէ-

րերուն վերադառնուեցան։ Այս պատերազմին հետեւանքով Ոռուսիոյ ազգեցութիւնը շատ տկարացաւ, իսկ Թուրքիա եւրոպական պետութեանց պաշտպանութեան տակ մտաւ։

Բարիզի այս դաշինքով Թուրքիա կրկին խոստում տուած էր իր երկիրը բարեկարգել և քրիստոնեաները պաշտպանել։ Սակայն 5 տարի չանցած Սուրբոյ մահմէտականները Լիբանանի քրիստոնեաներուն վրայ յարձակեցան և մեծամեծ ջարդեր ըրին։ Ասոր վրայ Թրանսար բանակ զրկեց այդ կողմերը և Լիբանան կիսանկախ երկիր մը եղաւ։ Դէպքեր պատահեցան նաև Կիլիկիոյ մէջ։

ԶԼՅԹՈՒԻՆԻ ԴԼՊԲԵՐԸ. — Զէյթուն Կիլիկիոյ հիւսիս-արեւելեան կողմը լեռնային դաւառ մըն էր, տասնի չափ գիւղերով։ Զէյթունցիք անվախ և պատերազմակը մարդիկ ըլլալով Կիլիկիոյ հայկական անկախութեան կործանումէն ի վեր կիսանկախ կերպով կ'ապրէին հայ իշխաններու ձեռքին տակ, միշտ յաղթական կոիւներ մղելով իրենց վրայ յարձակով մահմէտական ժողովուրդներու դէմ։ Անոնք կառավարութեան կը վճարէին տարեկան 15,000 զուրուշի տուրք մը և ուրիշ պարտականութիւն չէին ճանչնար։

Սակայն թուրք կառավարութիւնը վերջին ժամանակները կ'ուզէր այդ տուրքը շատցնել և նեղել Զէյթունցիները։

Խրիմի այս պատերազմէն յետոյ Ոռուսաստանէն բազմաթիւ մահմէտականներ գաղթեցին Թուրքիա։ Կառավարութիւնը ուղեց ասոնցմէմաս մը բնակեցնել Զէյթունի մէջ։ Զէյթունցիք թոյլ չառվին։


1862 ին մեծ վէճ մը ծագեցաւ այս հայերու և շրջակայ թուրքերու միջև, Ասկէ օգտուելով



Զէյթունցիներ

Մարտի կուսակալը 40,000 զօրքով ԶԵՐԺՈՒՆԻ վրայ արշաւեց և շատ մը վնասներ տուաւ։ Ասոր վրայ ԶԵՐԺՈՒՆՍԳԻՔ պատերազմ յայտարարեցին թուրքերու դէմ և ջարգեցին ու փախցուցին զօրքը։ Հայոց բողոքին վրայ ֆրանսա միջամտեց և հաշտութիւն կայացաւ։

Այս հաշտութեամբ ԶԵՐԺՈՒՆԻ կառավարութիւնը նորէն Հայոց ձեռքը կը մնար, բայց կառավարիչը Թուրք կառավարութեան կողմէ սկսի զրկուէր, իսկ տուրքը բարձրացաւ 25,000 զահեկանի։ ԶԵՐԺՈՒՆՍԳԻՆԵՐՈՒ այս քաջադործութեանց պատմութիւնները տարածուեցան Հայոց մէջ ամէն կողմ և մեծ խանդավառութիւն առաջ բերին։



ԶԵՐՈՒՆ

ԴԱՍ ԻԵ.

6. Դ. ՌՈՒՍ-ԹՐՖԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ
(1877-1878)

ՊԱՏԵՐԱՋ. — Խրիմի պատերազմէն ի վեր Ուռուիա առիթ կը փնտուէր իր վրէժը լուծելու Թուրքերէն։ Այդ առիթը ներկայացաւ։

Պալքանեան ժողովուրդներէն Հերաէքցիներն ու Պանիացիները ապստամբեցան։ Անոնց օրինակին հետեւեցան նաև Պուլկարներն ու Սերպերը։ Թուրքերը սոսկալի ջարգեր ըրին այդ ապստամբութիւններուն վերջ տալու համար։ Այս լուրերը երբ եւրոպա հասան, պետութիւնները պահանջեցին սուլթանէն որ Պալքաննեան այդ երկիրներուն մէջ բարենորոգումներ մացնէ որ ալ անկարգութիւններ չպատահին։ Այդ բարենորոգութիւնները որոշեցին մեծ պետութիւններու Պոլսոյ դեսպանները։

Այն ատենները Թուրքիոյ սուլթանն էր Ապահով-Համիտ, որ մերժեց եւրոպացւոց պահանջը, յայտապացւոց պահանջը, Ապսիւլ - Համիտ



Ապսիւլ - Համիտ

բարելով թէ իր բոլո՛ր երկրին մէջ բարենորոշութիւն պիտի մտցնէ, և թնդանօթի 101 հարուածներով Սահմանադրութիւն հոչակեց:

Ոռուսիա չխաբուելով այս խաղէն՝ պատերազմ յայտարարեց Թուրքիոյ դէմ:

ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Ամէն ատենուան պէս, այս անդամ ալ պատերազմը երկու կողմէն էր — Սև ծովու եղերէն և Հայաստանի կողմէն։ Հայաստանի մէջ գործող բանակին հրամանատարն էր Լորիս Մէլիքով, որուն կ'օդնէին ուրիշ քանի մը նշանաւոր հայ զօրավարներ եւս չետեւաբար բոլոր Հայերը մեծ ուրախութեան մէջ էին, որովհետեւ կը խորհէին թէ այլեւս փրկութեան ժամը հասած է։ Ուստի անոնք ամէն կերպով օգնեցին Պոտուաց։ Շուտով ուռանակը հասաւ մինչև էրզրումի մօտերը։ Սակայն Բարձր-Հայքի լեռներու մէջ Թուրքերը լաւ դիմադրութիւն մը ըրին և ստիպեցին Ոռուաերը որ նահանջեն։ Հայերը յուսահատութեան




Զօր. Լորիս Մէլիքով

մէջ ինկան, իսկ մահմէտականները շատ ուրախացան։ Բայց Ոռուսերը կրկին յարձակման անցան, գրաւեցին կարսը և կարինը։

Եւրոպայի կողմէն ալ Ոռուսերը մինչև Պուտոյ քովերը հասած ըլլալով, սուլթանը ստիպւեցաւ հաշտութիւն խնդրել։ Հաշտութեան դաշները ստորագրուեցաւ Սան-Ստեֆանոյի մէջ։

Ոռուս-թրքական միւս պատերազմներու ատենուան պէս, այս անդամ եւս թուրքիոյ Հայերը մեծ նեղութիւններու ենթարկուեցան Թուրքերու և Քիւրտերու կողմէ։ Մանաւանդ ձէլալէտաին անունով քիւրտ շէյխ մը մեծ չարիքներ հասցուց Հայաստանի բնակիչներուն, երբ իր քրտական անկանոն բազմութիւնովը օգնութեան կ'երթար թուրք բանակին։

Այս նեղութեանց չդիմանալով Հայեր, կը ձգէին տուն տեղ, կը փախէին Ոռուսաց կողմը և ամէն կերպով կ'օդնէին անոնց։



ԴԱՍ ԻԶ.

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ԵՒ ՊԵՐԼԻՆԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԸ
ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ԴԱՇԻՆՔԸ.— Պատերազ-
մէն յետոյ երբ Սան-Ստեֆանոյի մէջ հաշտու-
թեան դաշինքը պիտի կնքուէր՝ Թուրքիոյ չա-
յոց պատրիարքն էր Ներսէս Վարժապետեանը,
որուն խնդրանքով Ոռուաց հրամատարը դաշին-
քին մէջ չայոց համար դրաւ 16 րդ յօդուածը,
որ կ'ըսէր.— Որովհիետ ուսւ օգօֆերուն Հայաստանի
մէջ գրաւած տեղերեն եւ բաշուելեն յետոյ այդ տեղե-
րուն մէջ կրնան խոռվութիւններ առաջ գալ, ուսի
բուրք կառավարութիւնը բարեկարգութիւններ պիտի
ընէ եւ Հայերը ապահովէ Քիւրերու եւ Զերեկնե-
րու դէմ:

Եւ Ոռուերը պիտի չքաշուէին չայաստանէն
մինչեւ որ այդ բարեկարգութիւնները կա-
տարուէին:

Այս կերպով Թուրքիա շատ տկարացած և
Ոռուիոյ ազգեցութեան տակ ինկած էր: Արդէն

միւս կողմէ ալ Ոռումանիա, Պուլկարիա և այլն
անկախ կը դառնային:

Անդլիա տեսնելով որ Ոռուսիա շատ զօրա-
ցաւ, Թուրքիայէն առաւ կիպրոս կղզին՝ խոս-
տանալով զինքը պաշտպանել Ոռուսիոյ դէմ:

Անկէ յետոյ ան (Անդլիա) պահանջեց որ
Պերլինի մէջ նոր ժողով մը գումարուի և հոն
քննուի Սան-Ստեֆանոյի դաշինքը:

Պերլինի Վեհաժողովը.— Ներսէս Պատ-
րիարքը երբ իմացաւ թէ նոր ժողով մը պիտի
գումարուի Պերլինի մէջ, պատուիրակութիւն մը
զրկեց Եւրոպայի մայրաքաղաքները խնդրելու
որ չայոց խնդիրն ալ նկատի առնուի: Այդ
պատուիրակութեան անդամներն էին Խրիմեան
Հայրիկ, Խորէն Նար-Պէյ, Ստեփան Փափաղեան,
և Մինաս Զերազ:

Անոնք յետոյ պիտի հաւաքուէին Պերլին և
Վեհաժողովէն պիտի խնդրէին որ Հայաստան
ալ Լիբանանի պէս կիսանկախ երկիր մը ըլլայ՝
Թուրքիոյ գերիշանութեան տակ: Սակայն ժո-
ղովը ոչ մէկ բան նկատի առաւ և Սան-Ստե-
փանոյի գաշինքին 16 րդ յօդուածն ալ Փոփո-
խութեան ենթարկեց և դրաւ 61 րդ յօդուածը
որ չայոց համար բնաւ նպաստաւոր չէր: Ասկէ

զատ, որոշուեցաւ որ Ռուսիա հեռանայ Հայաստանի մէջ իր գրաւած տեղերէն մինչեւ կարսքաղաքը, որ այս անդամ Ռուսիոյ կը մնար:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԵՏԻԱԿԱՆՔՆԵՐԸ. — Այս պատերազմէն յետոյ ատելութիւնը աւելի սաստկացաւ մահմէտականներու և Հայերու միջեւ: Այսպէս որ հաշտութենէն ետք 90,000 ի չափ հայեր ձգեցին իրենց երկիրը և քաշուեցան Ռուսայաստան: Այս կերպով Բարձր-Հայքի շրջանին մէջ Հայոց թիւը նուազեցաւ: Ռուսահայաստան մեկնող այս գաղթականները հոն շինեցին նոր քաղաքներ, ինչպէս օրինակ՝ Աղեքսանդրաբու (Լենինական), նոր Բայազիդ և այլն:

Վանի շրջանի մէջ ալ սովոր մը ծագեցաւ և ամէն կողմէն հասած օդնութեան շնորհիւ միայն կարելի եղաւ առաջքն առնել:

Կառավարութիւնը Զէյթունցիներէն եւս զինուոր առնել փորձած ըլլալով, հոն ալ խառնակութիւններ առաջ եկան:



ԴԱՍ ԻԷ.

7. ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՈՒՍՈՒՄԲՈՒԹԻՒՆ. — Հայերը, սկիզբը, մեծ յոյսեր ունէին Պերլինի 61 րդ յօդուածին և եւրոպական պետութեանց ստորագրութեան վրայ: Սակայն շուտով յուսախաբ եղան, որովհետեւ այդ գաշինքը ստորագրող պետութիւնները կ'աշխատէին Թուրքիոյ հետ բարեկամ ըլլալ:

Հիմա Ռուսերն ալ թշնամացած էին Հայոց, քանի որ անոնք ալ Պերլինի վեհաժողովին դիմեցին:

Խոկ Թուրք կառավարութիւնը ոչ 61 րդ յօդուածը յարգեց, ոչ ալ հայերուն տուած խոստամերը:

Հայաստանի Հայոց վիճակը հետզետէ անտառնելի կը դառնար: Կառավարութիւնը քիւրտերսն զէնք տուած էր և անոնք անպատճ կերպով ամէն չարիք կը հասցնէին ժողովրդեան: Ոչ կեանքի ապահովութիւն կար, ոչ ստացուածքի և ոչ ալ պատիւի:

Այն ատեն հայոց մէջ առաջ եկաւ նոր գա-

Ղափար մը — զենք առնել եւ ինքինք պատճանել։ Զարդացած և յանդուղն երիտասարդներ կիլիկիա և Հայոստան մտան և սկսան ժողովուրդին քարողել այդ ուղղութեամբ։

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԾԱՑՈՒԹԻՒՆԻ. — Այս աւտեններ Պոլսոյ մէջ կար Հայոց Միացեալ Բնիկերութիւնը, որ նոր ու զարդացած երիտասարդներ կը դրկէր գաւառները ուսուցչութիւն ընելու իր դպրոցներուն մէջ։ Այս ուսուցիչներէն ումանք յեղափոխական քարողիչներ եղան։ Ասոնց մէ մէկն էր Մկրտիչ Փորթուգալեանը որ վանի վարժապետանոցի տնօրէնն էր։ Վան կը գըտնուէր նաև Խրիմեան Հայորիկը։ Այս երկուքը ու գեւորեցին վանի երիտասարդութիւնը այնպէս որ կառավարութիւնը երկուքն ալ աքսորեց։ Սակայն անոնց գործը շարունակուեցաւ։ Փորբուգալեանի աշակերտները կազմեցին առաջին յեղափոխական կուսակցութիւնը որ Արմենական կոչուեցաւ։

Արմենականները քիւրտ աւազակները շատ անդամներ պատժեցին և 1896 ին ալ վան ջարդէ փրկեցին, մէկ շաբաթ կոռեւլով բազմաթիւ թուրք և Քիւրտ աւազակներու դէմ։

Արմենականներու թերթն էր «Արմենիա» զոր Փորթուգալեանը կը հրատարակէր Մարսիլիա, երբ աքսորէն յետոյ հոն հաստատուեցաւ։

ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐԸ. — Արմենականութենէ մէկ երկու տարի յետոյ, խումբ մը Ռուսահայ ուսանողներ Եւրոպայի մէջ կազմեցին նոր կուսակցութիւն մը, որ իրենց «Հնչակ» թերթին անունով կոչուեցաւ Հնչակեան։

Այս կուսակցութեան կարեւոր գործերը եղան։

Ա. Պոլսոյ Գում - Գափու թաղին ցոյցը։
Բ. Սասունի ապստամբութիւնը ուր Հայերը մեծ կունենալ մզեցին թուրքերու և Քիւրտերու գէմ։

Գ. Պապ - Ալիի ցոյցը՝ Պոլսոյ մէջ։
Դ. Զէյթունի ապստամբութիւնը, ուր կառավարութեան մեծ բանակները խայտառակաբար յաղ թուեցան և Եւրոպացիները միջամտելով, թուրք կառավարութիւնը ընդունեց որ Զէյթունի կառավարիչը քրիստոնեայ պիտի ըւլլայ։

Բայց այս ցոյցերուն ատենը թուրք կառավարութիւնը մեծամեծ ջարդեր ըրաւ Հայոստանի մէջ։ 300,000 Հայեր ջարդուեցան։ Այս պատճառաւ ալ Հնչակեաններու մէջ վէճ և պապաւում ինկաւ և կուսակցութիւնը տկարացաւ։

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ. — 1890 թուականին Թիֆլիսի մէջ, գարձեալ Ռուսահայերէ, կազմուեւ

յաւ ուրիշ կուսակցութիւն մը, որ իր «Դրօշակ» թերթին անունովը կոչուեցաւ Դրօշակեան կամ Դաշնակցական։

Այս կուսակցութեան կարեւոր գործերն ալ եղան հետեւեալները։

Ա. Խանասորի արշաւանքը՝ պատժելու համար ջարդարար քիւրտերը։

Բ. Պանք-Օթօմանի ցոյցը։

Գ. Սասունի Բ. ապստամբութիւնը։

Դ. Ելտըզի մահափորձը՝ Սուլթան Համիտի դէմ, որ չյաջողեցան։

Այս բոլորին Համիտ կը պատասխանէր մեծ ջարդերով և այս պատճառաւ ան կոչուեցաւ «Կարմիր Սուլթան»։

Այս ցոյցերու նպատակն էր ստիպել Եւրոպան որ Հայաստանի բարեկարգութիւնը իրականացնէ, բայց Եւրոպացիք իրարու հետ հակառակ ըլլալով չկրցան համաձայնիլ և ստիպել սուլթանը որ գործադրէ իր խոստացած բարեկարգութիւնները։



ԴԱՍ ԻԸ.

8. ՌՈՒՍԱԿԱՅԵՐԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ. — Արեւելեան Հայաստանը Ոռուսաց ձեռք անցնելէ յետոյ, այդ կողմերու Հայերը ատեն մը հանգիստ ապրեցան, հարստացան և ամէն կերպով յառաջդիմեցին։

Սակայն ատեն մը եկաւ Երբ Ոռուսաց կառավարութիւնը ուզեց ոռուսացնել իր Երկրի բուլոր այլացեղ ժողովուրդները, նաև Հայերը։ Ան փակեց բոլոր հայ դպրոցները, ստիպելով որ հայ տղաքը ոռուսական վարժարաններ յաճախեն։ 20,000 հայ մանուկներ փողոցներ մնացին։ Այն ատեն Հայոց կաթողիկոսն էր Մակար, որուն դիմումներաւն վրայ մաս մը վարժարաններ բացուեցան։

Սակայն ոռուսական հալածանքները աւելի սաստկացան Հայոց դէմ 1900 թուականէն յետոյ։ Ոռուսերը արդէն վշտացած էին Հայերէն որ Պերլինի Վեհաժողովին դիմած էին. անոնք հիմա կ'աշխատէին հաճելի երեւնալ Թուրքերուն որոնց դէմ կը պայքարէին Հայերը։ Թուրքահայերուն օգնողները Ոռուսահայերն էին, մա-

նաւանդ ոռւսահայ վարժարաններէ ելլող ուսեալ երիտասարդները։ Այս պատճառաւ Ուուս կառավարութիւնը հրամայեց գրաւել Հայոց բոլոր եկեղեցական կալուածները, որոնց հասոյթովը կը պահուէին այդ վարժարանները և փակել բոլոր գըպշոցներն ու ընկերութիւնները։ Յուղուեցաւ բուլոր Հայ ժողովուրդը, իսկ Ուուսահայերը, տեղտեղ զէնք առին և կոռւեցան կառավարութեան դէմ։

Այն ատեն Հայոց կաթողիկոսն էր Խրիմեան Հայրիկը, որը բուռն կերպով բողոքեց կառավարութեան այս ընթացքին դէմ։ Հայերը սկսան ատել Ուուսերը և սպաննել դէշ պաշտօնեաներն ու ոռւսերուն հետ բարեկամութիւն ընողները։



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Վերջապէս կառավարութիւնը ստիպուեցաւ հրաժարիլ իր մտադրութենէն։

ՀՈՅ - ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐԻ. — Ուուս կառավարութիւնը Հայերը այսպէս հալածած ատեն շատ երես տուած էր Կովկասի Թաթարներուն։ Այս Թաթարներն ալ, սիրտ առած, սկսան նեղել Հայերը և սպանութիւններ կատարել։ Հայերը, համբերութիւննին հատած, իրենք ալ սկսան Թաթարներու վրայ յարձակիլ։ Երկու դրացի ժողովուրդները, այսպէս, սկսան զերարկութուններէ և կողոպտել։ Այս կուիւները տեւեցին Կոտորել և կողոպտել։ Այս կուիւները տարի (1905 - 1907) և Ուուս կառավարութիւնը անտարբեր մնաց։ Վերջապէս, շատ աւելը բումներէ յետոյ, երկու ժողովուրդներուն գըլը խաւորները քով քովի գալով հաշտութիւն գոյացուցին, հասկնալով թէ Ուուս կառավարութիւնն է որ թշնամութիւն ձգած է իրենց միջև, զիրենք տկարացնելու համար։

Այս կուիւներուն յաջորդեցին սովոր ու համաճարակը։

Հայ - Թաթարական կուիւներէն յետոյ Ուուսահայերը հանգիստ ու խաղաղ ապրեցան մինչև Մեծ Պատերազմը։



ԴԱՍ ԻԹ.

9. ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅԵՐԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ

ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ԶԱՐԴԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ.— Սուլ-
թան Ապտիկ - Համիտ մօտ 33 տարի սարավե-
լի բռնութիւններով կառավարեց իր երկիրը։
Ան միայն Հայերը չէր որ կը հալածէր, այլ
նաև թուրք ազատասէր երիտասարդները։ Ան իր
կոտորածներովն ու գէշ կառավարութիւնովը
երկիրը կործանման դուռը հասուցած էր։

Եւրոպա փախած թուրք հայրենասէր երի-
տասարդները, տեսնելով իրենց երկրին դժբախտ
վիճակը, որոշեցին ապստամբութիւն հանել Պոլ-
սոյ մէջ, Համիտը վար առնել և իրենց երկիրը
փրկել։ Անոնք գործի անցնելով ապստամբեցու-
ցին թուրք զօրքը և Համիտ վախնալով ստիպ-
ուեցաւ ազատութիւն տալ, Սահմանադրութիւն
հոչակել (1908 թուլիս 10)։

Այս գէպքը մեծ ուրախութիւն առաջ բե-

րաւ Թուրքիոյ բոլոր ժողովուրդներուն մէջ։ Բո-
լոր բանտարկեալները աղատ արձակուեցան և
փախստականները երկիր վերադարձան։ Ասկէ
յետոյ ամէն մարդ հաւասար պիտի ըլլար, ա-
մէնուն արդարութիւն պիտի ըլլար և ամէնքը
իրարու հետ եղբօր պէս պիտի վարուէին։
Կազմուեցաւ երեսփոխանական ժողով որուն
անդամակցեցան 12 նշանաւոր Հայեր։

Կիլիկիոյ ՀԱՅՈՑ ԶԱՐԴԸ.— Սակայն Հա-
միտ անկեղծ չէր։ Անիկա ուղած էր խաքել ժո-
ղովուրդը և ատեն մը վերջ նորէն հին կառա-
վարութիւնը հաստատել։

Ուստի 1909 Ապրիլի սկիզբը գրգռեց Կի-
լիկիոյ թուրքերը որ Հայոց վրայ յարձակին և
հան զրկեց այն բանակը որ իր դէմ ապստամ-
բած էր։ Կիլիկիոյ Հայերը, նաև ինքնինքնին
բած էր։ Կիլիկիոյ Հայերը, սակայն երբ զօրքն ալ մի-
լաւ պաշտպանեցին, սակայն երբ զօրքն ալ մի-
ացաւ ժողովուրդին, Հայերը չկրցան դիմանալ։
Անոնց տուները և խանութները կողոպտուեցան։
և այրուեցան և 15,000 ի չափ ալ կոտորուեցան։
Քանի մը օրուան մէջ չէն և բազմամարդ Կիլի-
կիոյ քաղաքները աւերակ դարձան։

Հայերը համոզուեցան թէ Թուրքիա բնաւ
բարեկարգուելիք չունի։
Երբ ասդին Կիլիկիոյ Հարդը տեղի կ'ունե-


նար, Պոլսոյ մէջ ալ Համիտ տղէտ թուրքերը ապստամբեցնել տալով, կ'ուզէր հին կառավարութիւնը հաստատել։ Սակայն թուրք հայրենասէրներ չձգեցին որ սուլթանը յաջողի։ Անոնք նորէն բանակով Պոլիս մտան, յաղթեցին Համիտի մարդոց և սուլթանը վար առին։

ՏՐԻՊՈԼԻՍՈՅ ԵՒ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏՄԵՐԱԶՄ-ՆԵՐԸ. — Երբ նոր թուրքիոյ կառավարութիւնը կ'աշխատէր երկիրը բարեկարգել, իտալացիք պատերազմ բացին անոր դէմ և գրաւեցին Ափարիկեան Տրիպոլիսը, որ մինչև այն ատեն թուրքիոյ կը պատկանէր։ Թուրքերը յաղթուեցան և հրաժարեցան այդ երկրէն։

Հազիւ այս պատերազմը վերջացած՝ Պալքանեան ժողովուրդները — Սերպ, Պուլկար, Յոյն և այլն, միաբանած յարձակեցան թուրքիոյ վրայ՝ անկէ խլելու համար նախապէս իրենց պատկանող հողերը։ Թուրքերը չարաչար կերպով պարտուեցան և դաշնակիցները հասան մինչև Պոլսոյ գուռները։ Հաշտութիւն գոյանալով, թուրքիա դաշնակիցներուն ձգեց Պալքանեան թերակղիի մէջ ունեցած բոլոր հողերը։



ԹՈՒՐՔԻԱ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԵՏՈՅ



(Սեւ գիծերը կը ցուցեն նոր սահմանները)

ԴԱՍ Լ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Օսմանեան Սահմանադրութեան հրատարակութենէն յետոյ Հայերը հանդարա մնացին և յուսացին որ նոր կառավարութիւնը իրենց վիճակի մասին եւս կը խորհի: Սակայն անօդուտ: Հայաստանի գաւառներուն մէջ կառավարութեան պաշտօնեաները և քիւրտ պէյերը կը շարունակէին հին ընթացքը:

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը ամէն օր բողոքադիրներ կ'ստանար գաւառի առաջնորդներէն, կը զիմէր կառավարութեան, կառավարութիւնը կը խոստանար, բայց խոստումը չէր գործադրուեր:

Ուուսաստանի Հայերը եւս յուզուեցան իրենց Թրքահայ եղբայրներու տառապանքները լսելով: անոնք դիմեցին Հայոց Գէորգ Ե. կաթողիկոսին որ Ուուսաց կայսրին պաշտպանութիւնը խնդրէ: Միեւնոյն ատեն կաթողիկոսը հրամայեց Պօղոս փաշա նուպարին որ Եւրոպա մեկնի մեծ պետութեանց կառավարութիւններուն ալ



ՊՍՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

բացատրելու Հայաստանի վիճակը և դարման խնդրելու:

Եւրոպական տէրութեանց Պոլսոյ դեսպանները հրաման ստացան դեսպանաժողով մը կազմելու և խորհելու թէ ինչ պէտք է ընել Հայաստանի համար: Այդ ժողովը 1914 Յունուար 26 ին տուաւ իր որոշումները զորս ընդունեցին Թուրքիա և պետութիւնները:

Այդ որոշումներուն համաձայն ամբողջ Թրքահայաստանը կը բաժնուէր երկու մասի և

անոնց վրայ կը դրուեին երկու եւրոպացի քըն-նիչներ:

Այդ քննիչները շատ մեծ իրաւունքներ ու-նէին, գրեթէ մէջ մէկ վոխարքաներ էին:

Այս կերպով Հայաստանը գրեթէ կը դատ-ուէր Թուրքիայէն և կիսանկալս երկիր մը կ'ըլլար:

Այս կարգադրութենէն շատ գոհ էին Հա-յերը, բայց գոհ չէին Թուրքերը: Հետեւաբար անոնք պիտի սպասէին յարմար ատենին ջնջելու համար այդ կարգադրութիւնները և իրենց վրէ-ժը լուծելու Հայերէն:

Այդ յարմար ատենը շուտ եկաւ, երբ քանի մը ամիս յետոյ ծագեցաւ Ընդհ. Պատերազմը:

Համաձայնութիւնը գոյանալէն անմիջապէս յետոյ որոշուեցան Ընդհանուր Քննիչները: Մին չոլանտացի էր և կը կոչուէր Վեսթեննենկ, իսկ միւսը Նորվէկիացի էր և կը կոչուէր Հօֆ: Ասոնք Մայիսին մեկնեցան Հայաստան:

Այնքան զարեր տառապելէ և այնքան ջարդ և աւեր տեսնելէ յետոյ, Հայաստան պիտի սկսէր նոր կեանքի մը, Հայ ժողովուրդը խաղաղու-թիւն պիտի տեսնէր ու զարդանար: Բայց ահա նոյն տարւոյ Յուլիս 20 ին ծագեցաւ Ընդհա-նուր Պատերազմը և Հայոց բոլոր յոյսերը պա-րապի եւան:

ԴԱՍ ԼԱ.

11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՌ

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸՆԴՀ. ՊԱՏԵՐԱԶՄԸ.— 1914 Յուլիս 20 ին ծագեցաւ Ընդհ. Պատերազմը, Եւրոպական պե-տութիւնները բաժնուած էին երկու հակառա-կորդ խումբերու: Մէկ կողմն էին Գերմանիա, Աւստրի-Հունգարիա (այն ատեն միացած), Պուլ-կարիա և Թուրքիա, իսկ միւս կողմը՝ Ֆրանսա, Անգլիա, Ռուսիա, Սերպիա, Ռումանիա և Պել-ճիքա: Այս վերջիններուն միացան յետոյ Մի-ացեալ Նահանգները, Խոտլիս, Յունաստան և այլն: Թուրքիա ամենէն ուշ մասնակցեցաւ այս կորուին:

Այս պատերազմը տեւեց 4 տարի, 1914 էն մինչև 1918: Ահաւոր պատերազմ մը եղաւ ան, երկիրներ քար ու քանդ եղան և միլիոնաւոր մարդիկ մեռան:

Այս կորուին պատճառ եղան Սերպերը ո-րոնց հայրենիքին մէկ մասը Աւստրի-Հունգա-րիոյ մաս կը կազմէր: Սերպերը սպաննեցին

Աւատրօ - Հունդարիոյ գահաժառանդը, յուսալով
այդ կերպով քայքայել կայսրութիւնը։

ԹՐԻՓԱՀԱՅՈՅ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՈՑՈ-
ՐԱԾԸ (1915).— Թուրք կառավարութիւնը մաս-
նակցելով այս պատերազմին առիթը յարմար
դտաւ իր վրէժը լուծելու Հայերէն։ Թէև Թուր-
քիոյ Հայերը իրենց պարտականութիւնը կատա-
րեցին կառավարութեան հանդէպ և անոր ամէն
ուղածը առւին — դրամ, զինուոր, բանակին
պէտք եղած ամէն բան, սակայն Թուրքե-
րուն միտքը ուրիշ էր։ Անոնք կ'ուղէին Հայոց
խնդիրը մէկ անգամէն լուծել՝ ոչնչացնելով ի-
րենց երկրի Հայութիւնը։ Իրենց արգելք եղող
մը չկար, քանի որ բոլոր պետութիւններն ալ
պատերազմով զբաղած էին։

Թուրքերը աւելի զայրացան երբ իմացան
թէ Ուուսահայստանի կողմէն, բազմաթիւ հա-
յեր, կամաւոր խումբեր կազմած, Ուուսերուն
միացած, Թուրքիոյ վրայ կը յարձակին։ Այս
խումբերուն մեծերէն մէկն էր քաջն Անդրանիկը։
Ուուսաց կայսրն ալ արդէն, հրովարտակով մը,
կը հրափրէր բոլոր Հայերը որ օգնեն իրեն։

Թրքահայ երիտասարդներէն շատերն ալ
վստահ չըլլալով կառավարութեան վրայ, զին-
ուութեան չգացին։ Վանեցիները զէնք վերցու-



ՔԱԶՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ցին և պատերազմեցան Թուրքերու դէմ մէկ ա-
միսի չափ, մինչև որ կամաւոր բանակը օդնու-
թեան հասաւ և թշնամին փախաւ։

Օսմանեան կառավարութիւնը իր նպատակը
գործադրել ուղելով, բոլոր Հայերը խումբ խումբ
հաւաքելով դէպի Արարիա աքսորեց (1915 Ապ-
րիլ 24)։ Ճամբան անոնց մեծ մասը կոտորուե-
ցաւ և կամ անօթութենէ և հիւանդութիւններէ

մեռաւ: Զինուորութեան դացողներն ալ բոլորը շարդուեցան: Խոկ երախաներէն շատերը յափեշա տակուեցան և կամ գետերը նետուելով խեղդուեցան:

Այս տեղահանութիւնները և ջարդերը տեւեցին մէկ տարի, որմէ յետոյ Հայաստանը ամայացաւ: Արաբիոյ անապատները հասնողները թշուառութեան մէջ ապրեցան, մինչև որ վերջացաւ Բնդհ. Պատերազմը:

Քանի մը տեղերու մէջ Հայերը ինքզինքնին պաշտպանեցին և կռուելով մեռան: 300,000 է չափ Հայեր ալ կարողացան փախչիլ Ոռոսահայստան:



Թրքահայ գաղթականներ Հայաստանի մէջ

ԴԱՍ ԼԲ.

12. ՈՌԻՍԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԵԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

ՈՌԻՍԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ.— Ոռոսերը շատ կամաց շարժեցան և ժամանակ տուին Թուրքերուն որ կոսորեն Հայերը Յետոյ անոնք ոչընչացնելով թուրք բանակը դրաւեցին Հայաստանի մեծ մասը՝ Երդնկայէն մինչև Վան: Սակայն անոնք պարտուեցան Գերմաններէն և մեծ կորուստներ կրեցին: Ասոր հետեւանքով ուսւ ժողովուրդը ապստամբեցաւ իր կառավարութեան դէմ (1917), կայսրութիւնը տապալեց և հանդիմ (1917), կայսրութիւնը հաստատեց: Քիչ յետոյ նոր պղստամբութիւն մըն ալ ծագեցաւ Ոռոսիոյ մէջ, և այս անդամ պոլշեւիկիեան կառավարութիւնը հաստատուեցաւ:


Նոր կառավարութիւնը չուզեց պատերազմը շարունակել և հաշտուեցաւ Գերմանիոյ և Թուրքիոյ հետ: Կնքուեցաւ Պրեստ-Լետովսկիի գաշինքը և շատ մը մասեր Ոռոսիայէն զատուելով կազմեցին

նոր պետութիւններ (Լեհաստան և Պալթիկ ծովու եզերքի պղտիկ երկիրները)։ Այս դաշինքով Ռուսերը Թուրքերուն պիտի ձգէին ոչ միայն իրենց գրաւած վայրերը, այլ նաև Պաթում, Արտահան և Կարսը, որոնք առաջ Ռուսաստանին կը պատկանէին։

ՀԱՅՈՑՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԻՆ. — Ռուսաստանի այս խառնակութիւնները պատճառ եղան որ կովկասն ալ խառնակուի։ Այս կողմի ռուսական բանակն ալ քայքայուեցաւ և զօրքերը ձգեցին հեռացան։ Հայեր, Վրացիներ և Աղբակէճանցիները նախ միացած առժամանակեայ կառավարութիւն մը կազմեցին և պատերազմը շարունակեցին։ Անոնք փորձեցին հաշտուիլ Թուրքիոյ հետ, սակայն Թուրքերը միշտ ձգձգեցին և շարունակելով կուր գրաւեցին ամբողջ կորմնցուցած տեղերը և անցան 1914ի սահմանը։ Անոնք կ'ուղէին դրաւել ամբողջ կովկասը, և կը պահանջէին առժամանակեայ կառավարութենէն որ զատուի Ռուսաստանէն։ Վրացիները և Աղբակէճանցիները որոշեցին զատուիլ և իրենց երկիրը անկախ յայտարարեցին։ Հայերն ալ ստիպուեցան նոյնը ընել և 1918 Մայիս 28ին Հայաստան անկախ յայտարարեցին։ Սակայն այն ատեն Թուրքերը հա-

սած էին մինչև Երեւան և հայութեան վիճակը սարսափելի էր։ Հայերը փորձեցին վերջին ճիգ մը ընել ինքզինքնին պաշտպանելու և Սարտարապատի ու Վարաքիլիսայի քով յաղթեցին Թուրքերուն։ Ասոր վրայ Թուրքերը ճանչցան Հայաստանի անկախութիւնը և հաշտութիւն կընքեցին։ Այս Հայաստանը ունէր 11,000 քառ. քիլոմետր տարածութիւն։

Սակայն նոր կառավարութեան գործը շատ գժուար էր։ Երկիրը աւերակ և աղքատ էր, ահագին գաղթականներով, որոնք տուն ու տեղ չունէին և փողոցներ մնացեր էին։ Սովը և հիւանդութիւնները հաղարաւոր մարդոց կեանքը խլեցին։ Նոր կառավարութիւնը կ'աշխատէր անոնց վիճակին դարման տանիլ, գործ ճարելով բոլորին։ Բացուեցան արհեստանոցներ և որբանոցներ։ Դուրսի հայերը և օտարներն ալ մեծամեծ օդնութիւններ ըրին նորակազմ Հայաստանին։



ԴԱՍ ԼԳ.

13. ԹՈՒՐՔԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ
ԵՒ

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒԻ ԴԱԻԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

ԹՈՒՐՔԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ.— Հայաստանի անկախութեան հաստատութենէն քիչ յետոյ Թուրքերն ու Գերմանները յաղթուեցան։ Դաշնակիցներու ստիպումովը Թուրքերը կովկասի կողմէն քաշուեցան 1914 ի սահմանները, գրաւած տեղերը յանձնելով Հայաստանի կառավարութեան, որով Հայաստան հինգ - վեց անգամ մեծաւ։


Սուրբոյ կողմէն ալ հայ կամաւոր բանակ մը դաշնակիցներուն օդնելով տարած էր Արարայի յաղթանակը և դաշնակից զօրքերու հետ գրաւած կիլիկիան։ Արարիոյ և Սուրբոյ կողմերը աքսորուած հայութեան մասցորդները լեցուեցան կիլիկիա, ուր նոր կեանք մը սկսան։ Հոսալ արտասահմանի Հայոց, օտարներուն և մասնաւանդ Հ. Բ. Բ. Միութեան կողմէ բազմաթիւ արհեստանոցներ, որբանոցներ և դպրոցներ բացուեցան, գործ, սնունդ և ուսում տալու համար այրիներուն, որբերուն և մանուկներուն։

ՍԵՎՈՒԻ ԴԱՇԻՆՔԸ.— Պետութիւնները 1920 ին կազմեցին Սեվոփ ժողովը, կարգադրելու համար բոլոր խնդիրները։ Այս տեղ որոշուեցաւ որ Թուրքիա Հայաստանին ձգէ նաև Տրապիզոնի, Կարինի, Բաղէշի և Վանի շրջաններէն կարեւոր մասեր։ Որովհետև, Հայերը այսքան ատեն պայքարած էին Թուրքիոյ դէմ այս Հայաստանի համար։ Թուրք կառավարութիւնը ընդունեց և դաշինքը ստորագրուեցաւ։

ԹՈՒՐՔԻՈՅ ԶՈՐԱՑՈՒՄԸ.— Սակայն ո՞վ պիտի գրաւէր այդ Հայաստանը, դաշնակիցները ատիկա չորոշեցին։ Հայաստանի կառավարութիւնը շատ տկար էր, դաշնակիցներն ալ չըրին ատիկա։

Այդ ատեններ Թուրքիոյ մէջ երեւան ելաւ մարդ մը — Մուստաֆա Փէմալ անունով, որ թուրք ցրուած բանակը իր շուրջը հաւաքեց, ապստամբեցաւ իր կառավարութեան դէմ և յայտարարեց թէ չընդունիր Սեվոփ դաշինքով դրուած պայմանները։


Մուստաֆա Փէմալ նախ յարձակեցաւ Հայաստանի վրայ, յաղթեց և գրաւեց կարսն ու Աղեքսանդրապոլը։ Հայերը ստիպուեցան հաշտուիլ և կնքել Աղեքսանդրապոլի դաշինքը որով Հայաստան շատ կը պղտիկնար։



Հայաստանի լոս Անկուր դաշինքին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ՓԵՏՔ.
18 Ի ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ.— Ճիշտ այդ ատեններ
պոլշեւիկ հայեր Հայաստան մտան, գրաւեցին
երկիրը և հաստատեցին Խորհրդային Հայաստանի
կառավարութիւնը, աղատելով Հայաստանի մէկ
մասը Թուրքերու ձեռքէն:

Սակայն նոր կառավարութիւնը շատ խիստ
վարուեցաւ հին կառավարութեան մարդոց հետ,
որոնք Փետրուար 18 ին ապստամբեցան, դուրս
վոնտեցին նոր կառավարութեան մարդիկը և
հաստատեցին «Փրկութեան Կոմիտէ»ի կառավա-
րութիւնը: Սակայն շուտով պոլշեւիկները նոր ուժ
հաւաքած, կուիով մտան Հայաստան (Ապրիլ ամ-
սուն), յաղթեցին և վերահաստատեցին Խորհրդա-
յին կառավարութիւնը, որ կը տեւէ մինչև հիմա:



Կարս բերդաբաղադր

Կիւկինը ՊԱՐՊՈՒՄԸ եի ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴՐԻՆ ԹԱՂՈՒՄԸ. — Թուրքերը անկէ յետոյ յարձակեցան Կիլիկիոյ վրայ, որ Փրանսացւոց ձեռքը կը գտնուէր: Թրանսացիք չուղելով նոր պատերազմ մը ընել, Էնկիւրիի դաշինքով հաշտուեցան Մուստաֆա Ֆէմալի կառավարութեան հետ և 1921ի վերջը այդ երկիրը յանձնեցին Թուրքերուն: Կիլիկիոյ 150,000 ի մօտ հայերը, ձգելով ամէն բան, գաղթեցին Սուրբա և ուրիշ տեղեր:

ԻՉՄԻՐԻ եի ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՅ ԳԱՂԹԸ. — Թուրքերը անկէ յետոյ յարձակեցան Յոյներու վրայ, որոնք այդ ատեններ գրաւած էին Խղմիրը: Բուռն կոխներէ յետոյ յունական բանակը յաղթուեցաւ: Թուրքերը մտան Խղմիր, ջարգելով քրիստոնեաները: Հազարաւոր հայեր, գրեթէ մերկ, ապաստանեցան Յունաստան:

Պոլիսն ալ դաշնակիցներու գրաւման տակ ըլլալով՝ Մուստաֆա Ֆէմալ յառաջացաւ անոնց վրայ: Դաշնակիցները Պոլիսը յանձնելով Թուրքերուն հեռացան: Հազարաւոր հայեր Պոլիսը ձգելով փախան Յունաստան և ուրիշ կողմեր:

Առկէ յետոյ, դաշնակիցները բազմաթիւ ժողովներ գումարեցին կարգադրելու համար Մեծ Պատերազմէն մնացած խնդիրները: Հայոց ներկայացուցիչները շատ աշխատեցան որ Թրքահայաստանի խնդիրն ալ կարգադրուի, սակայն Թուրքերը չընդունեցին և դաշնակիցներն ալ բան մը չկրցան ընել:

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅՈՍՏԱՆ. — Փետրուար 18 ի դէպքէն ասդին Հայաստան հանգիստ կ'ապրի և կը յառաջդիմէ: Ան նախ դաշնակից եղաւ Վրաստանի և Աղրպէճանի հետ, և անոնց հետ միասին, իրեւ մէկ մարմին, դաշնակից եղաւ. Խորհրդային Ռուսիոյ, վայելելով անոր պաշտպանութիւնը և օդնութիւնը: 1936 ին վերջացաւ կովկասեան Դաշնակցութիւնը և Հայաստան, իրեւ առանձին կառավարութիւն, մնաց դաշնակից Խորհրդային Ռուսիոյ:

Խորհրդային Հայաստան ունի 30,000 քառ. քիլոմէթր տարածութիւն: Առաջ անոր բնակչութիւնը 700,000 էր, հիմա բարձրացած է 1,200,000 ի: Կառավարութիւնը հոգ կը տանի երկրին և ժողովուրդին յառաջդիմութեան: Շինուեցան ջրանցքներ, նոր տաւաններ, ֆապրիքներ: Հանքերը և ջուրի հոսանքները կ'օգտագործուին: Կրթութիւնը պարտաւորիչ է և Հայաստանի մէջ գրել-կարդալ չգիտցող մարդ գրեթէ չկայ: Հայաստան ունի համալսարան և ամէն տարի դպրոցներուն թիւը կը շատնայ: Կառավարութիւնը բազմաթիւ գաղթականներ տարաւ երկիր և անոնց գործ տուաւ: Արտասահմանի հայերն ալ կ'օգնեն երկրին յառաջդիմութեան և կ'սպասեն որ մը կարենան փոխադրուիլ հոն:

ԴԱՍ ԼԴ.

14. ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Հայերն ալ, ուրիշ շատ մը ժողովուրդներու պէս, գաղթած են ուրիշ երկիրներ։ Այդ գաղթականութեան պատճառները զանազան են. գաղթած են առեւտրական պատճառներով, իրենց երկրին մէջ հուր ու սուր տեսնելով և կամ տեղահանուելով բռնաւորներէն։

Ամենէն առաջ Հայերը բռնի գաղթեցուած են դէպի Պարսկաստան Շապուհի և Սասանեան ուրիշ թագաւորներու օրով։ 16րդ դարուն, Շահ Ապաս, Արարատեան նահանգի հայերը փոխագրեց Պարսկաստան, իսկ աւելի վերջերը, համիտական հալածանքներու և Մեծ Պատերազմի օրերուն, բազմաթիւ հայեր փախած են այդ երկրը։

Այսօր Պարսկաստանի մէջ 80,000 ի չափ հայ կայ: Պարսկահայերը մեծ օգտակարութիւն ունեցած են իրենց նոր հայրենիքին և հայ ժողովուրդին։

ԲԻՒԶԱՆԴԱՀԱՅ ԳԱՂԹՈՒԹՅՈՒՆ.— Հայերը շատ հին ժամանակներէ սկսեալ գաղթած են նաև

դէպի Բիւղանդիոն՝ նեղուելով զրադաշտական Պարսկաներէն։ Ասկէ զատ, Բիւղանդիոնի կայսերն ալ շատ անգամներ հայերը հանած են իրենց երկրէն ու տեղափոխած կայսրութեան զանազան մասերը։ Այս հայերէն ոմանք անուանի զօրավարներ դարձան բիւղանդական բանակին մէջ և մեծ յաղթանակներ տարին, իսկ ուրիշներ ալ յաջողեցան կայսր ըլլալ Բիւղանդիոնի։ 14 ի չափ հայ կայսրեր կան։

ԱՐԱԲՈԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՅ ԳԱՂԹՈՒԹՅՆԵՐԸ.— Ե. դարէն սկսեալ Արաբները արշաւելով Հայաստան, բազմաթիւ հայեր գաղթեցուցին արաբական երկիրները։ Թրքական իշխանութեան ժամանակ եւս այդ կողմերը մեծ թիւով հայեր կային։ Մեծ Պատերազմին ատեն և կիւլիկիոյ պարագումէն յետոյ հաղարաւորներ այդ կողմերը գաղթելով հոն հաստատուեցան։ Այս օր Սուրիոյ և Լիբանանի մէջ 150,000 է անոնց թիւը։ 10,000 ի չափ հայեր կը բնակին իրազի մէջ, իսկ Պաղեստինի մէջ մօտ 5,000։

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂԹՈՒԹՅՈՒՆ.— Հայոց ներկայութիւնը Եգիպտասի մէջ, նմանապէս շատ հին է։ Բայց անոնց թիւը շատցաւ երբ Եգիպտասի սուլթանները սկսան յարձակիլ Հայկական կիւլիկիոյ վրայ ու հաղարաւոր գաղթականներ փոխադրեցին դէպի նեղոսի եղերքները։ Այս

Հայերէն ոմանք մեծ զօրավարներ և վեզիրներ եղան և Եգիպտոսը պաշտպանեցին ներքին ու արտաքին թշնա-

միներսւ դէմ:

Ա.յդ ժամա-

նակուան նշա-

նաւոր հայերն

են Պատր-Էլ-

կամալի, Շահն

շահ-Էլ-Աֆտալ

և Վահրամ

Պահլաւունի:

Հայոց թի-

ւը Եգիպտոսի

մէջ շատցաւ

համիտական

հալածանքնե-

րու ժամանակ

և անկէ յետոյի:

Վերջին ժամա-

նակներու մէջ

ալ նշանաւոր

հայեր մեծ ծառայութիւններ մատուցին Ե-

գիպտոսի,

օրինակ նուպար Փաշա, Պօղոս Պէյ

Եռուսուֆեան,

Եագուալ Արթին Փաշա, Տիգրան

Փաշա և Պօղոս Փաշա նուպար, որ հիմնեց

Հ. Բ. Ը. Միութիւնը:



Նուպար Փաշա

Հայեր մեծ ծառայութիւններ մատուցին Ե-

գիպտոսի,

օրինակ նուպար Փաշա, Պօղոս Պէյ

Եռուսուֆեան,

Եագուալ Արթին Փաշա, Տիգրան

Փաշա և Պօղոս Փաշա նուպար, որ հիմնեց

Հ. Բ. Ը. Միութիւնը:

Այսօր Եգիպտոսի մէջ 25,000 ի չափ հայ կայ: Եգիպտահայերը մեծ օդտակարութիւն ունեցած են՝ Հայաստանի և Կիլիկիոյ հայերուն, ինչպէս նաև գաղթականներուն:

Բաւական թիւով հայեր կան նաև Հապեցիստանի, Սուտանի, Թունուղի և Ալճէրիոյ մէջ: 3,000 ի մօտ հայեր կան Կիպրոսի մէջ:

ՀՆԴԿՈՍՏԱՆԻ ՀԱՅ ԳՈՂՈՒԹԸ. — Պարսկակաստանի Հայերն էին որ կազմեցին Հնդկահայ գաղութը, հաստատուելով ծովեզերեայ մեծ քաղաքներու մէջ: Անոնք հօն զբաղեցան մանաւանդ վաճառականութեամբ և մեծ հարստութիւն դիզեցին: Սակայն անոնք չմոռցան իրենց մայր հայրենիքը և աշխատեցան անոր ազատութեան համար: Իրենցմէ ոմանք ալ մեծ գումարներ ձգեցին ազգին կրթական գործին յատկացուելու համար: Օրինակ՝ Ռաֆայէլ Նարամեան և Սամուէլ Մուրատ, որոնց կտակովն է որ այսօր կը պահուի Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը Վենետիկի մէջ:

Հայերը Հնդիկ թագաւորներու քով կարեւոր պաշտօններ ձեռք բերին: Հայերէն առաջին թերթը՝ «Աղդարար»), Հնդկաստան հրատարակուած է:

Հնդկաստանէն ալ տարածուելով, հայեր հասան Սումաթրա, Ճաւա, Զինաստան և Ճարոն:

ԴԱՍ ԼԵ.

ՔԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Ծ. Ա. Բ.)

ԹԱԹԱՐԻՍՑԱՆԻ ԵՒ ԽՐԻՄԻ ՀԱՅԵՐԸ.— Հինքն ի վեր հայեր առեւտրական նպատակներով գացած են թաթարական երկիրներ։ Բայց անոնց թիւը շատցաւ այդ կողմերը մանաւանդ թաթարաց արշաւանքներու ժամանակ։ Բայց անոնք հանգիստ չդանելով հոն, հեռացան ու դացին հաստատուեցան Խրիմ, որուն Թէղողոսիա քաղաքին մէջ միայն 100,000 էր անոնց թիւը։ Սակայն երբ Օսմանցիք տիրեցին Խրիմի (ԺԵ. դար) շատերը ջարդեցին հայոցմէ և անկէ յետոյ անոնք ցրուեցան։

Ո-ՌԻՄԱՆԻՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՀԱՅԵՐԸ.— Այս գաղութներն ալ հին են։ Բայց հայերը առելի շատցան այդ կողմերը համիտական հալածանքներու և Մեծ Պատերազմի ժամանակ։ Ներկայիս Թումանահայոց թիւը 40,000 ի, իսկ Պուլկարիոյ հայոց թիւը 25,000 ի չափ է։ Երբեմն անոնք ունեցած են ազատ քաղաքներ (Գերլա և Պաշալով)։ Ո-ՌՈՒՄԱՆԻՈՅ մէջ եւս հայերը շատ առաջ գացած են և օդտակար եղած այդ երկին։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ.— Այս երկրին մէջ, առեն մը 200,000 ի չափ հայ կար, դաղթած չայաստանէն Բաղրատունեաց թագաւորութեան կործանումէն յետոյ և Խրիմէն։ Լեհաստանի թագաւորները մեծ արտօնութիւններ տուած էին հայոց որոնք կ'զբաղէին վաճառականութեամբ։ Հայաշատ քաղաքներու մէջ անոնք ունէին առանձին դատարաններ և տեսակ մը կառավարութիւն։

Բայց ԺԵ. դարուն սկիզբը երբ նիկոյ Թուրոսովիչ անունով անարժան և փառասէր եկեղեցականը անոնց առաջնորդ դարձաւ, ահազին վէճեր ստեղծեց ժողովուրդին մէջ և վերջէն ալ կաթոլիկութիւն տարածեց, որուն հետեւանքով ժողովուրդէն շատերը ցրուեցան, ուրիշներն ալ տեղացիներու հետ ձուլուեցան։ Այսօր հազիւ 5,000ի չափ հայեր կան Լեհաստանի մէջ։

ՖՐԱՆՍՈՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ.— Ներկայիս 40,000 ի չափ հայեր կը գտնուին ֆրանսայի մէջ, հոն գաղթած Մեծ Պատերազմէն յետոյ։ Կ'ապրին արհեստներով և ֆապրիքներու մէջ աշխատաւորութեամբ։ Թէկ ունին՝ Բարիզի և Մարսիլիոյ մէջ՝ առաջնորդութիւններ, սակայն չկան հայ գպրոյցներ։

ԴԱՍ ԼԶ.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

(Շ. Ա. Ռ.)

ԻՑԱԼԻՈՑ ՀԱՅ ԳԱՂԹՈՒԹՅ.— Այս երկրին մէջ հին ատեն, Կիլիկիոյ հայոց թագաւորութեան կործանումէն յետոյ, թէև շատ էին հայերը, բայց այսօր անոնք չկան, կաթոլիկութիւն ընդունելով խառնուած ըլլալով տեղացիներուն հետ։ Այսօր Խոտալիա գտնուող փոքրաթիւ հայերը նոր գաղթած են այդ կողմերը։

Հայերը, հոս, Վենետիկի քով, Ս. Ղազար կղզին մէջ ունին Միսիթարեաններու վանքը։ Անոր հիմնագիրը եղած է Միսիթար Սեբաստացին, որուն կողմէ հաստատուած Միարանութիւնը անդնահատելի ծառայութիւն մատուցած է մեր աղջին իր հրատարակութիւններովը։ Միսիթարեանց մէկ ճիւղը կը գտնուի Վիէննայի մէջ, որոնք եւս մեծապէս ծառայած են մեր աղջին մեղ սորվեցնելով մեր հին լեզուն ու պատմութիւնը։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՈՒԹՅ.— 30,000 ի չափ հայեր կը գտնուին Յունաստանի մէջ, գաղթած՝ Պոլսէն, Իղմիրէն, Կիլիկիայէն և այլն։

Ուրեմն նոր գաղութ մըն է աս։ Այս տեղի հայերէն շատերը խեղճ դրութեան մէջ են ու Հ. Բ. Ը. Միութիւնը և օտար բարեսիրական մարմիններ կարեւոր օժանդակութիւններ կ'ընեն տակաւին անոնց, տուն տեղ ըլլալու և ապրուիլ կարենալու համար։

ԹՈՒՐՔԻՈՑ ՀԱՅԵՐԸ.— Այսօր 70,000 ի չափ հայեր կը գտնուին Թուրքիոյ մէջ, այն ալ մեծ մասը կ. Պոլիս, ուր երբեմն 200,000 էր անոնց թիւը, իսկ ամբողջ Թուրքիոյ մէջ՝ երկու ու կէս միլիոն։ Գաւառուի փոքրաթիւ հայերը զրկուած են եկեղեցիէ և ամէն բանէ, իսկ Պոլսոյ մէջ համեմատաբար հանգիստ են, բայց զուրկ աղշային կեանք։

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ԼԶ.— Հայաստանի մէկ միլիոնէ աւելի հայութենէն զատ, մեծ թիւով հայեր կան նաև զրացի երկիրներու մէջ։ Այսպէս մօտ 310,000 է անոնց թիւը Վրաստանի մէջ, անկէ քիչ պակաս թիւով հայեր կան Ազրակէճան, 120,000 ի չափ՝ անկախ Ղարաբաղ, և 20,000 ի չափ ալ Շարուրնախիջեւան։ Խորհրդային ուրիշ երկիրներու մէջ 200,000 ի չափ հայեր կան։

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅ ԴԱՂՈՒԹՆԵՐԸ.— Նոր են այս գաղութներն ալ: Միացեալ նահանգներու հաշյոց թիւը 125,000 է: Այս գաղութը կազմուած է վերջին կես դարու ընթացքին: Ամերիկահայերը մեծ օգտակարութիւն ունեցան աղդին՝ հակայ գումարներով օգնելով անոր: Շատերը կ'ապրին ֆապրիքաներու մէջ բանուորութիւն ընելով, սակայն կան արհեստաւորներ և վաճառականներ ալ:

Պրագիլիոյ, Արժանթինի, Ուրուկայի և Բարակուայի մէջ եւս հայեր կան: Անոնց թիւը 50,000 ի մօտ է: Պատերազմէն յետոյ կազմուած գաղութներ են ասոնք և հետզհետէ կը մեծնան:

Լեզուն, կրօնքը և պատմութիւնը այս բուլոր հայերը իրարու կը կապեն և ամէնքին սիրառ կը տրոփի հայրենիքի սիրոյն համար:

— Ա Ե Ր Զ —

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ՄԱՍԻՆ Բ.

ԴԱՍԱ ԺԷ.

Պատմեցի՛ Օսմանի բուրժերուն ծագումը: Ի՞նչպէս հաստառնեցաւ Օսմաննեան պետութիւնը: Օսմանցիները ե՞րբ եւ ի՞նչպէս մասն Հայաստան: Ի՞նչ վերաբերուն ունեցան Հայոց համերկայ եւ ի՞նչ ըրաւ Շահ-Ապաս:

ԴԱՍԱ Ժ. Թ.

Ի՞նչ զիսկ Պարարադի Հայ Մելիքութիւններու մասին: Մելիքները ինչո՞ւ եւ ի՞նչպէս դիմեցին Մեծն Պետրոսի եւ ի՞նչ եղաւ հետեւանիլ: Ո՞վ եր Դաւիթ պէկը եւ ի՞նչ ըրաւ:

ԴԱՍԱ Թ.

Ի՞նչ եր Եկուսերինի կայսրուհին նպատակը եւ ի՞նչ եղան Պարարադի Մելիքութիւնները: Ե՞րբ եւ ի՞նչպէս Ռուսերը սիրեցին Վրաստանի: Ի՞նչ եղաւ հետեւանիլ:

ԴԱՍԱ Թ. Ա.

Ի՞նչ եր Ռուսաց նպատակը. ի՞նչ եղաւ Ռուս-պարական առաջին պատերազմին արդիւնիլ: Ե՞րբ սկսաւ ու ե՞րբ վերջացաւ Ռուս-թրքական առաջին պատերազմը. ի՞նչ դիրք բռնեցին Հայերը այս պատերազմին մէջ: Պատմել Ռուս-պարական երկրորդ պատերազմը եւ ըսել թէ ի՞նչ եղաւ անոր հետեւանիլ: Ո՞վ եր Ներսէ Աշտարակեցին եւ ի՞նչ ըրաւ:

ԴԱՍԱ Թ. Բ.

Ի՞նչ եր պատմառը Ռուս-թրքական երկրորդ պատերազմին. ի՞նչ ըրին Ռուսերը եւ ի՞նչպէս վերջացաւ ան: Այս շրջանին ի՞նչ վեճեր պատահեցան Պղսահայոց մէջ. որո՞նի եին ատոնց պատմառները:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ի՞նչ է Պողոսեևի կենաց մասին: Ի՞նչ է Թամազի մաքը. ի՞նչ զիտիկ Հայ - կարողի լիներու եւ Հայ - բողոքականներու մասին: ի՞նչպէս բաժնուեցան անոնք հայ եկեղեցին: Ի՞նչպէս հաստատուեցաւ Ազգ. Սահմանադրութիւնը. ի՞նչպէս եւ Հայոց վիճակը գաւառներու մէջ:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ինչո՞ւ ծագեցաւ Ռուս - թրժական երրորդ պատերազմը, ի՞նչպէս վերջացաւ, եւ ի՞նչ հետեւանք ունեցաւ: Ի՞նչ զիտիկ Զեյրունի եւ Զեյրունացիներու մասին: Ի՞նչ եղաւ անոնց վիճակը այս պատերազմին յետոյ:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ի՞նչո՞ւ ծագեցաւ Ռուս - թրժական չորրորդ պատերազմը: Ի՞նչ ըրին Ռուսերը, ի՞նչ վերաբերում ունեցան Հայերը եւ ի՞նչ եղաւ առոր հետեւանքը:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ի՞նչ որոշուեցաւ Սան - Ստեփանոյի մէջ Հայոց մասին: ինչո՞ւ զումարուեցաւ Պերջինի Վեհաժողովը եւ ի՞նչ որոշուեցաւ Հայաստանի համար: Այս պատերազմին յետոյ ի՞նչպէս եր Հայաստանի վիճակը:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ինչո՞ւ Հայերը յուսախար եղան Պերջինի Վեհաժողովին արդիւնքին եւ ի՞նչ եղախացութեան ելան: Ո՞րևէ ե Հայոց առաջին յեղախախան կուսակցութիւնը եւ ի՞նչ ըրաւ ան: Ի՞նչ զործեր տեսաւ Հնակեան կուսակցութիւնը եւ ի՞նչ եղաւ հետեւանքը: Ի՞նչ զործեր տեսաւ Դաշնակցութիւնը: Ի՞նչ եր ցոյցերում նապատակը:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ռուսերը ինչո՞ւ սկսան հաջածել Հայերը. ի՞նչեր ըրին. ի՞նչ ըրին Հայերը: Ինչո՞ւ ծագեցան Հայ - բարարական կողմաները եւ ի՞նչպէս վերջացան անոնք:

Գ. Ա. Ս Ի Պ.

Ե՞րբ եւ ինչո՞ւ յայտարուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը: Ե՞րբ եւ ինչո՞ւ տեղի ունեցաւ Կիլիկիոյ Հայոց կոսորածը: Խօսի Տրիպոլի եւ Պայտանեան պատրազմներու եւ անոնց հետեւանքներու մասին:

Գ. Ա. Ս Լ.

Օսմանեան Սահմանադրութեան հրատասկութեան յետոյ ի՞նչ ըրին Հայերը եւ ի՞նչ վերաբերում տեսան. ի՞նչ եղաւ հետեւանքը: Ինչո՞ւ զումարուեցաւ Պողոյ Դեպանամողովը եւ ի՞նչ ըրաւ: Թուրքերը զոհ մնացի՞ն անկի:

Գ. Ա. Ս Լ Ա.

Ե՞րբ եւ ինչո՞ւ ծագեցաւ Ընդհ. Պատերազմը. որքա՞ն տեսէց: Ինչո՞ւ Թուրքերը տեղահանեցին Հայերը եւ ինչե՞ր ըրին. ի՞նչ ըրին Ռուսահայերը եւ Վանեցիները: Ո՞ւ դրկուեցան տեղահանուածները:

Գ. Ա. Ս Լ Ա.

Ինչո՞ւ Ռուսիա պարտուեցաւ եւ ի՞նչ ըրաւ նոր կառավարութիւնը: Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու մէջ յայտարուեցաւ Հայաստանի անկախութիւնը: Ի՞նչ զիտիկ այդ առենուան Հայաստանի վիճակի մասին:

Գ. Ա. Ս Լ Ա.

Թուրքիոյ պարտութիւնով լինած եղան Հայաստանն ու Կիլիկիան: Ի՞նչ որոշուեցաւ Սելին Ժողովին մէջ Հայաստանի համար: Ո՞վ եր Մուսրաֆս Բէմազը եւ ի՞նչ ըրաւ: Ինչո՞ւ տեղի ունեցաւ Փետր. 18ի ապաւալութիւնը եւ ի՞նչպէս վերջացաւ: Ե՞րբ եւ ինչո՞ւ պարտուեցաւ Կիլիկիան: Ինչո՞ւ եւ ո՞ւր գաղթեցին Խզմիրի եւ Պողոյ Հայերը: Ի՞նչ զիտիկ Խորհր. Հայաստանի մասին:

Գ. Ա. Ս Լ Ա.

Ինչո՞ւ զաղքած են Հայերը Հայաստանին: Ի՞նչ զիտիկ Պարսկահայ զաղութի մասին: Ի՞նչ զիտիկ Բիւզանդահայ

գաղուրի մասին: Հայերը ե՞րբ գաղթեցին դեպի արարական երկիրները եւ հիմա ո՞րքան Հայեր կան Սուրբա, Լիբանան եւ Պաղևսին: Խօսի Եղիպտակայ գաղուրի մասին: Ո՞ր Հայերը ճշմաւոր հանդիսացած են: Ի՞նչ զիտի Հնդկակայերու մասին:

Պ. Ա. Ա. 1. Ա.


Պատմել Թարախիսանի եւ Խրիսի Հայ գաղթականութեանց մասին: Ե՞րբ շասցան Ռումանահայերը եւ Աերկայի ինչքա՞ն է անոնց թիւր: Ո՞ւրիշ գաղթած էին Լեհահայերը եւ վեցը ի՞նչ երան: Ի՞նչ զիտի Թրանսայի Հայ գաղթականութեան մասին:

Պ. Ա. Ա. 1. Զ.

Ո՞ւրիշ գաղթեցին Խտանայերը եւ ի՞նչ եղան: Ո՞ւրիշ գաղթած են Յունաստանի Հայերը, եւ ի՞նչպէս է Աերկայի անոնց վիճակը: Ներկայի ո՞րքան Հայ կայ Թուրքիոյ մէջ եւ ո՞ւր: Ի՞նչպէս է անոնց վիճակը:

Ի՞նչքան Հայեր կան Վրաստանի, Աղրականի եւ Նախիջեւանի հանրապետութեանց սահմաններուն մէջ: Ի՞նչքան կը հաշուուի Խորհրդային միւս երկիրներու Հայոց թիւր:

Ե՞րբ հաստատուեցաւ Ամերիկայի Հայ գաղուրը: Ո՞րքան Հայ կայ Միացեազ Նահանգաց մէջ եւ ո՞րքան Հայաստանի Ամերիկայի մէջ:



ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

Մ. Ա. Ա. Ա.

ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐ

Գ.Ա.Ա	1. ՄԱՐԶՊԱՆԱՅ ՇՐՋԱՆ	Էջ
Ա. —	Վարդանանց պատերազմը	5
Բ. —	Աւարայրի հակատամարտը	9
Գ. —	Վահան Մամիկոնեանի կռիւները	12
Դ. —	Վարդան Գ. եւ Գայլ Վահանի կռիւները .	15
	2. ՀՅԱՍՏԱՆ ԱՐԱԲ. ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ	
Ե. —	Ա. Ոսիկաններու ԵՐՋԱՆ	17
Զ. —	Բ. Բագրատունեաց ԵՐՋԱՆ	20
Է. —	Բագրատստի մեծ բագաւորները Աբաս, Առաք Ողորմած, Սմբատ Բ. եւ Գագիկ Ա.	22
Ը. —	Յովհաննես - Սմբատ	26
Թ. —	Բագրատունեաց բագաւորութեան վախճանը Գագիկ Բ.	29
	3. ՍԵԼՃՈՒՔ ԹՈՒՐՔԵՐՈՒ ԱՐՃԱԽԱՆՔԸ	
Ժ. —	Տուղրիլի եւ Ալփ-Ասլանի անգրութիւնները .	32
	4. ԿԻԼԻԿԻԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ	
ԺԱ. —	Ա. Իշխանապետութեան ԵՐՋԱՆ	34
ԺԲ. —	Իշխանապետութեան ԵՐՋԱՆ (ժար.)	38
	Բ. ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ	
ԺԳ. —	Լեռն Մեծագործ	41
ԺԴ. —	Հերում Ա.	45
ԺԵ. —	Կիլիկիոյ բագաւորութեան Տկարացումը .	48
ԺԶ. —	Կիլիկեան բագաւորութեան վախճանը .	51
ԺԵ. —	Լեռն - Թիմուրի արշաւանքը	55
	Հարցումներ Ա. Մասի	58

ՄԱՍՆ Բ.

ՆՈՐ ԴԱՐԵՐ

ԴԱՍ	Էջ
ԺԸ.— 1. Թուրք եւ Պարսիկ կռիւները	61
ԺԹ.— Զեւնարկներ Պարսկահայաստանը ազատելու	65
Ի.— 2. Ռուսաց երեւան գալը	69
ԻԱ.— 3. Ռուս - պարսկական եւ Ռուս - բրժական պատերազմները	72
ԻԲ.— Բ. Ռուս - բրժական պատերազմը	77
ԻԳ.— 4. Բարեկարգութեանց որդան	80
ԻԴ.— 5. Գ. Ռուս-բրժական պատերազմը	85
ԻԵ.— 6. Դ. Ռուս-բրժական պատերազմը	89
ԻԶ.— Սան-Սևեֆանոյի եւ Պերլինի Վեհաժողով- ները եւ Հայկական հարցը	92
ԻԷ.— 7. Հայ յեղափոխական կուսակցութիւնները	95
ԻԸ.— 8. Ռուսահայերը	99
ԻԹ.— 9. Թուրքիոյ Հայերը, Օսմ. Սահմանադրու- թիւնը եւ Կիլիկիոյ Հայոց ջարդը	102
Լ.— 10. Հայաստանի բարենորոգութեանց խնդիրը	106
ԼԱ.— 11. Ընդհ. Պատերազմը եւ Տարագրութիւնները	109
ԼԲ.— 12. Ռուսիոյ պարտութիւնը եւ Հայաստանի անկախութիւնը	113
ԼԳ.— 13. Թուրքիոյ պարտութիւնը եւ դաշնակից- ներու դաւանանութիւնը	116
ԼԴ.— 14. Հայ գաղթականութիւնները	122
ԼԵ.— Հայ գաղթականութիւնները (շար.)	126
ԼԶ.— Հայ գաղթականութիւնները (շար.)	128
Հարցումներ Բ. Մասի	131



5401

ՆՈՅՆ ՀԵՂԻՆ Ա.Կ.Է.Ն

1.— Հայոց Պատմութիւն, Տառական	Դիմ 6 Ե. Վ. Գ.
2.— Հայոց Պատմութիւն, Ծարք Ա., Գիրք Ա. Հիմ Դասեւ	,, 8 ,,
3.— Հայոց Պատմութիւն, Ծարք Ա., Գիրք Բ.	
Միջին և Նոր Դասեւ	.. 10 ..
4.— Հայոց Պատմութիւն, Միջին Դասեւ (բնդարձակ)	.. 12 ..
5.— Հայոց Պատմութիւն, Նոր Դասեւ և Ժամանակակից Ծրչան	.. 15 ..



Դիմել հետեւայ հասցեին՝

L. ADJÉMIAN

B. P. 1060

LE CAIRE (Egypte)

Printed in Egypt.

by HAGOP PAPAZIAN Press

Ibrahim Pacha, Haret Faïed, 6

CAIRO (Egypt)